

# ՄԵԴԻԱ ՀԱՆԴՈՒԹՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ինդեքսը իրավապաշտպանների  
և ակտիվիստների հանդեպ Հայաստանում

## INDEX FOR MEDIA TOLERANCE

towards Human Rights Defenders  
and Change Activists in Armenia



---

# Մեդիա հանդուրժողականության ինդեքսը իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ Հայաստանում

---

2015 թ. ապրիլից դեկտեմբեր

Երևան 2016

ՀՏԴ 323:659.3:070

ՊՄԴ 66.3+76.0

Մ 432

վերլուծաբան՝ Ժաննա Անդրեասյան  
հետազոտողներ՝ Անահիտ Հարությունյան, Սոնա Մանուսյան  
իրավագետ՝ Գայանե Խաչատրյան  
իրավապաշտպան փորձագետ՝ Էդուարդ Դանիելյան  
աջակիցներ՝ Արփի Մանուսյան, Աննա Ժամակոչյան, Էվելինա Գյուլխանդանյան

թարգմանիչ՝ Սոնա Մանուսյան  
գրաֆիկական ձևավորող՝ Գարիկ Ենգիբարյան  
շապիկի լուսանկարը՝ Գարիկ Ենգիբարյանի «Բողոք կարված բերանով» ինստալյացիայից

Մ 432

**Մեդիահանդուրժողականության ինդեքսը իրավապաշտպանների  
և ակտիվիստների հանդեպ Հայաստանում: Ապրիլ-դեկտեմբեր  
2015.- Եր.: Սոցիոսկոպ ՀԿ, 2016.- 122 էջ:**

Zhanna Andreasyan, analyst

Anahit Harutyunyan and Sona Manasyan, researchers

Gayane Khachatryan, legal expert

Eduard Danielyan, human rights expert

Arpie Manasyan, Anna Zhamakochyan and Evelina Gyulkhandanyan, assisting team

Translated into English by Sona Manasyan

Graphic design by Garik Yengibaryan

Cover photo from "Protest with sewn mouth" installation by Garik Yengibaryan

Index for Media Tolerance towards Human Rights Defenders  
and Change Activists in Armenia

April-December 2015

ՀՏԴ 323:659.3:070

ՊՄԴ 66.3+76.0



«Սոցիոսկոպ» հասարակական  
ուսումնասիրությունների և  
խորհրդատվության կենտրոն ՀԿ  
"Socioscope" Societal Research  
and Consultancy Center NGO



Նորվեգիայի  
Հելսինկյան կոմիտե  
Norwegian Helsinki  
Committee

ISBN 978-9939-1-0357-0



Սոցիոսկոպ ՀԿ, 2016  
Socioscope NGO, 2016

Բովանդակությունը օգտագործելի և տարածելի է՝ միմիայն հեղինակի անունը նշելու և  
հղում կատարելու պարտադիր պայմանով և ոչ առևտրային նպատակներով:

All content is free for non-commercial use and dissemination provided the authors are men-  
tioned and reference is made.

«Մեդիա հանդուրժողականության ինդեքսը իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ Հայաստանում» հետազոտությունը իրականացվել է «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնի կողմից՝ Նորվեգիայի Հելսինկյան կոմիտեի աջակցությամբ: Այն միտված է թիրախային այս երկու խմբերի հանդեպ լրատվամիջոցների (ան)հանդուրժող խոսքի վերհանմանը և դրա ինդեքսավորմանը: ՉԼՄ-ի մշտադիտարկումն ու ՉԼՄ տեքստերի կոդավորումն ըստ հանդուրժողականության-անհանդուրժողականության սանդղակի պարունակում է ինչպես օբյեկտիվ կամ փաստական, այնպես էլ ընթերցողի սուբյեկտիվ ընկալման՝ տվյալ դեպքում մշտադիտարկումն իրականացնող կոդավորողի չափումները: Հաշվետվությունն ամփոփում է 2015 թվականի ապրիլից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի ուսումնասիրության արդյունքները:

Հետազոտությունը հնարավոր է եղել իրականացնել իրավապաշտպանության և մեդիադուրոտի բազմաթիվ գործընկեր կազմակերպությունների և անհատ փորձագետների հետ համագործակցության շնորհիվ, ինչի համար նրանց հայտնում ենք մեր շնորհակալությունը:



## Բովանդակություն

Գլուխ 1	Հայաստանյան մեդիադաշտի համառոտ նկարագիրը	7
Գլուխ 2	Ձրապարտությունն ու վիրավորանքը լրատվամիջոցներում. իրավական սահմանումներ և նախադեպեր	13
Գլուխ 3	Ինչպես չափել (ան)հանդուրժողականությունը. ինդեքսի համառոտ նկարագրություն	19
Գլուխ 4	Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիահանդուրժողականության ինդեքսի հիմնական արդյունքները	28
Գլուխ 5	Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիադաշտի դիրքորոշման շուրջ որակական դիտարկումներ	32
Գլուխ 6	Փորձագիտական դիտարկումներ իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիադաշտի դիրքորոշման առնչությամբ	58
Գլուխ 7	Եզրակացություններ և առաջարկություններ	62
Հավելված	Սահմանադրական փոփոխությունների ներկայացումը առցանց մեդիայում	65



## Գլուխ 1

### Հայաստանյան մեդիադաշտի համառոտ նկարագիրը

Մեդիայի դերն արդի աշխարհում գերազնահատելը դժվար թե հնարավոր լինի, քանզի այն իրավամբ ներթափանցել է հանրային և անձնական կյանքի կամայական ոլորտ՝ միաժամանակ կարողանալով պահպանել արտաքուստ աննկատելիությունը: Ֆրանսիացի մտածող Ժան Բոդրիարը մեդիայի այդ վերափոխումը դիտարկում էր իբրև համարժեք գենետիկ փոփոխությունների, որոնց պարագայում այլևս անիմաստ են պատճառի և հետևանքի վերաբերյալ քննարկումները:

*«Հեռուստատեսությունը պետք է ներկայացնել Դևիդ-ի համանմանությամբ, որպես մի հետևանք, որում անհետանում են պատճառականության հակադիր բևեռները, որտեղ այլևս չի կարող դիտարկվել հեռավորություն պատճառի և հետևանքի կամ սուբյեկտի և օբյեկտի միջև: Այլ կերպ ասած՝ անհետանում է այն հեռավորությունը, որն ապահովում է իմաստը, տարբերական հնարավորությունը, միջակայքը: Այս միջակայքն անհետանում է գենետիկ կոդավորման գործընթացում»<sup>1</sup>:*

Ֆրանսիացի մեկ այլ հասարակագետ՝ Պիեռ Բուրդյոն գտնում էր, որ մեդիան (հեռուստատեսությունը) վերածվել է նշանային (սիմվոլիկ) ագրեսիա իրականացնող միջոցի<sup>2</sup>:

Այս տեսակետից զարմանալի չէ, որ մեդիատիրույթում դիրք ունենալը դառնում է հանրային և իշխանական որոշակի ռեսուրս՝ ընձեռնելով նոր ռեսուրսների և իշխանության նոր աստիճանի հասնելու լայն հնարավորություններ:

Միաժամանակ մեդիայի՝ չորրորդական դիրքից իշխանական պատվանդանի առավել բարձրադիր վայրերում հայտնվելը ուղեկցվում է նաև թափ առնող քննադատությամբ՝

<sup>1</sup> Տե՛ս [http://lit.lib.ru/k/kachalow\\_a/simulacres\\_et\\_simulation.shtml](http://lit.lib.ru/k/kachalow_a/simulacres_et_simulation.shtml):

<sup>2</sup> Տե՛ս <http://bourdieu.name/en/node/108>:



մեդիաքննադատությամբ, որը նպատակ ունի բացահայտել հանրային կյանքի վրա մեդիայի ունեցած մանիպուլյատիվ ազդեցությունը և ձերբազատվել դրանից:

Այս առումով ինչպե՞ս է բնութագրվում հայաստանյան մեդիատիրույթը: Կառուցվածքային տեսանկյունից մեդիատիրույթը կարելի է բաժանել ավանդական մեդիադաշտի (սրա տակ նկատի ունենալով հեռուստատեսությունը, ռադիոն և տպագիր մամուլը) և այլընտրանքային մեդիատիրույթի, որը ներկայացված է առցանց մեդիայի և սոցիալական ցանցերի միջոցով: Համաձայն Երևանի մամուլի ակումբի, ավանդական մեդիադաշտը Հայաստանում ներկայացված է շուրջ 60 հանրապետական և մարզային հեռուստաընկերությունների, 19 ռադիոընկերությունների և 72 տպագիր լրատվամիջոցների միջոցով<sup>3</sup>: Սրան գումարվում են նաև տեղում հեռարձակվող արտասահմանյան հեռուստաալիքները: Այլընտրանքային մեդիատիրույթը շատ ավելի դինամիկ է՝ համացանցի տարածմանը և օգտագործման ինտենսիվությանը զուգընթաց գրանցելով հորդառատ անձրևից հետո սնկերի աճին համաման մի ակտիվություն: Իրավիճակը միանշանակ չէ նաև այնքանով, որ ավանդական և այլընտրանքային մեդիադաշտերի սահմաններն այլևս հստակ գծագրված չեն. տպագիր մամուլի բազմաթիվ ներկայացուցիչներ թողարկում են նաև առցանց տարբերակներ, ավելին, տպագիր լրատվամիջոցի առցանց տարբերակը հաճախ հանդես է գալիս ավելի ընդլայնված ֆունկցիոնալությամբ՝ ներառելով նաև լրահոսի բաժինը, տեսաձայնագրություններ և այլն: Նույն կերպ նաև հեռուստաընկերությունները փորձում են ապահովել սեփական հեռարձակումը համացանցի տիրույթում՝ նպատակ ունենալով լինել ավելի ճկուն և հասնել այն լսարանին, որին հնարավոր չէ հասնել ավանդական հեռահաղորդակցության ենթակառուցվածքներով: Այդուհանդերձ, կարող ենք պնդել, որ ավանդական լրատվամիջոցները, որոնք ընդլայնում են իրենց գործունեությունը առցանց տարբերակով, միևնույն ժամանակ լսարանի տեսանկյունից շարունակում են գործառնել ավանդական մեդիատիրույթում՝ ընկալվելով առաջին հերթին որպես վերջինիս ներկայացուցիչ: Այսպես որ, չնայած գործառնական տեսանկյունից այս երկու դաշտերի տարբերությունները ավելի աննկատ են դառնում, դրանք դեռևս այդպիսին են հանրային ընկալման մակարդակում, ուստի դրանց առանձին դիտարկումն արդարացված է: Հանրային ընկալման մակարդակում այս երկու մեդիատիրույթների պատկերացման տարբերությունները հստակ երևում են նաև ոլորտում արված տարբեր հետազոտություններից: Դրանց

<sup>3</sup> Տե՛ս <http://ypc.am/armenian-media/?lang=hy>:

շարքում են Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստանի կողմից 2013-ին իրականացված «Հայաստանի թվային մեդիայի քարտեզագրում» զեկույցը<sup>4</sup>, Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոն-Հայաստանի կողմից իրականացված 2011 և 2013 թվականների հետազոտությունները՝ «Այլընտրանքային միջոցները հայաստանյան մեդիայում» վերնագրով<sup>5</sup>: Ըստ այդմ, հայաստանյան մեդիադաշտի հանրային ընկալման հիմնական առանձնահատկությունները հետևյալն են.

- *Հեռուստատեսությունը շարունակում է մնալ տեղեկատվության ստացման հիմնական միջոցը հասարակության զգալի մեծամասնության համար:*
- *Միաժամանակ հեռուստատեսության վերաբերյալ հանրային ընկալումը շատ ավելի հստակ է. մարդիկ դիտում են և կա՛մ վստահում են, կա՛մ ոչ:*
- *Առցանց մեդիայի ընկալումն այս տեսանկյունից շատ ավելի հեղիեղուկ է, ինչը վկայում է այն, որ այս ոլորտի վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելիս նկատելիորեն մեծ է եղել պատասխանել դժվարացողների թիվը:*
- *Առցանց մեդիայից օգտվողների շարքում շատ ավելի նկատելի են մինչև 40 տարեկան տարիքային խմբերը, իսկ ավելի բարձր տարիքի դեպքում առցանց մեդիայի լսարանը զգալի կրճատվում է:*

Հանրային հստակ կարծիք դեռևս չի ձևավորվել այն մասին, թե ինչպիսին է այս մեդիատիրույթը՝ օբյեկտիվ ու վստահելի, թե՞ կարգավորվող ու ուղղորդված: Սա մի կողմից որոշակի քարտ բլանշ է մեդիատիրույթի այս լրատվամիջոցներին՝ հանրային վստահության ռեսուրս ձևավորելու տեսանկյունից: Մյուս կողմից այս հանգամանքը կարող է ծառայել իբրև շղարշ՝ հանրային խմբավոր կարծիքի պարագայում ուղղորդված խոսքն իբրև օբյեկտիվ ներկայացնելու և մանիպուլյացիաներ իրականացնելու համար:

Հետևաբար առավել ուշագրավ է դիտարկել փորձագիտական կարծիքները՝ հասկանալու համար սոցիալ-քաղաքական այն լայն համատեքստը, որի շրջանակներում էլ գործառնում է այս մեդիատիրույթը:

Փորձագիտական կարծիքների դիտարկումն իրականացվել է երկու հիմնական աղբյուրների օգնությամբ՝ ոլորտում առկա հետազոտությունների և զեկույցների, ինչպես նաև մեր կողմից այս հարցերի շուրջ արված փորձագիտական հարցազրույցների համադրության միջոցով: Անդրադարձը փորձագիտական հարցազրույցներին իրականացվում է զեկույցի վերջում՝

<sup>4</sup> *Stu* <http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/OSF-Media-Report-Armenia.pdf>:

<sup>5</sup> *Stu* <http://www.crrc.am/research-and-surveys/completed-projects/326-Alternative-Resources-in-Media?lang=en>:

համատեքստի սրանց ներկայացումը համադրելով նաև իրականացված չափումների փորձագիտական մեկնաբանման հետ:

Ոլորտում առկա հետազոտությունների և զեկույցների շարքում քննարկվել են Ֆրիդոմ Ջաուս կազմակերպության՝ Մամուլի ազատության և Համացանցի ազատության ամենամյա զեկույցները Հայաստանի մասին: Մամուլի ազատության ընդհանուր ցուցանիշն այս դեպքում գոյանում է 3 բաղադրիչների գնահատականներից, որոնք են իրավական, բաղաբական և տնտեսական բաղադրիչները<sup>6</sup>: Հարկ է նշել, որ հայաստանյան մամուլը դասակարգվում է իբրև ոչ ազատ՝ սկսած 2003 թվականից<sup>7</sup>: Տնտեսական բաղադրիչով մամուլի ազատության գնահատականի վատթարացումն արձանագրվել է 2002-2004թթ., այնուհետև այն քիչ թե շատ կայուն կերպով նույն գնահատականն է ստանում վերջին տարիների համար: Ցուցանիշների հետընթացը հստակ արձանագրվում է բաղաբական բաղադրիչի համար, մի փոքր ավելի անկատ, սակայն բացասական փոփոխություններ է արձանագրվել նաև իրավական բաղադրիչի համար վերջին 5 տարիների կտրվածքով:

Միաժամանակ ուշագրավ է, որ համացանցի ազատության ցուցանիշներով Հայաստանը դասակարգվում է իբրև ազատ երկիր՝ չգրանցելով նկատելի խնդիրներ համացանցում բովանդակության սահմանափակման, օգտագործողների իրավունքների սահմանափակման տեսանկյունից<sup>8</sup>: 2015թ. այս զեկույցի տվյալներով Հայաստանում չեն արձանագրվել սոցիալական ցանցերի արգելափակման, կամ թե սոցիալ-բաղաբական բովանդակությամբ նյութերի արգելափակման, բլոգերների և օգտատերերի ձերբակալման դեպքեր<sup>9</sup>:

Այս զուգահեռ իրավիճակները, երբ մամուլն անազատ է, համացանցը՝ ազատ, ի հայտ են բերում առցանց մեդիատիրոյթի գործառնության մեկ այլ օրինաչափությունը:

Համաձայն Ֆրիդոմ Ջաուս կազմակերպության 2015թ. Մամուլի ազատության զեկույցի, ի հետևանք լրագրողների դեմ շարունակական ոտնձգությունների և հետապնդումների, անպատժելիության մթնոլորտի, լրագրողական շրջանում տարածված է ինքնագրաքննությունը, հատկապես կառավարական և իշխանական շրջանակների քննադատության հարցերում: Ինքնագրաքննությունն առավել տեսանելի է հեռուստատեսային դաշտում, մինչդեռ, համաձայն այս զեկույցի,

<sup>6</sup> Տե՛ս [https://freedomhouse.org/report/freedom-press/freedom-press-2015#\\_Vu\\_y2dJ97cs](https://freedomhouse.org/report/freedom-press/freedom-press-2015#_Vu_y2dJ97cs):

<sup>7</sup> Տե՛ս <https://freedomhouse.org/report/freedom-press/2003/armenia>:

<sup>8</sup> Տե՛ս <https://freedomhouse.org/report/freedom-net/2015/armenia>:

<sup>9</sup> Տե՛ս <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/armenia>:

առջանց լրատվամիջոցներն այս պարագայում ծառայում են իբրև շատ ավելի ազատ հարթակ: Վերջինիս կախվածությունը քաղաքական կոնկրետ շահեր և տեսակետներ ունեցող սեփականատերերից ավելի քիչ է, ուստի այս հարցերի լուսաբանման խմբագրական քաղաքականությունը քիչ է ընդգծված կամ առկա չէ:

Տնտեսական առումով ընդգծվում է, որ հեռուստաալիքների մեծ մասը կամ կառավարական, կամ դրանց մերձավոր շրջանակների ներկայացուցիչ անհատների սեփականությունն է հանդիսանում: Առջանց լրատվության և տեղեկատվության տարածման ինտենսիվությանը զուգընթաց՝ տպագիր մամուլը հետընթաց է ապրում: Ընդ որում, տպագիր մամուլն ավելի հաճախ է ցուցաբերում սեփականատիրոջ ուղեգծին հետևելու պատրաստակամություն, մինչդեռ առջանց մեդիայի դեպքում, իրավիճակն ավելի անպարզ է ու չկանոնակարգված. պարզ չեն սեփականատերերը և հստակ չեն ֆինանսավորման աղբյուրները:

Օրենսդրական և իրավական նորմերի տեսանկյունից այս հարցի հանգամանակից քննությունը տրված է հաջորդ բաժնում: Մինևույն ժամանակ հայաստանյան մեդիադաշտի նկարագիրը թերի կլինի առանց անդրադարձի այն վերահսկողության մեխանիզմներին, որոնք դաշտի չգրված նորմերն են կամ գործում են մասնագիտական դաշտի ներսում՝ որպես պրոֆեսիոնալ էթիկայի ուղենիշներ: Ինքնակարգավորման մեխանիզմները ինստիտուցիոնալ հիմքի վրա դնելու փորձեր են իրականացվել 2000-ականների սկզբից: 2007թ. Երևանի մամուլի ակումբը նախաձեռնեց մասնագիտական էթիկայի հիմնական նորմերի մշակումը: Այնուհետև կազմավորվեց ՀՀ-ների էթիկայի դիտորդ մարմին, որի կազմում սկզբում ընդգրկված էին 7 հոգի՝ 2011թ. ընդլայնվելով մինչև 14 հոգի<sup>10</sup>: 2015թ. այս կառույցի նախաձեռնությամբ իրականացվեցին փոփոխություններ մասնագիտական էթիկայի հիմնական նորմերի ցանկում: Այդ նորմերը սահմանող փաստաթուղթը Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրն է, որը, համաձայն Երևանի մամուլի ակումբի պաշտոնական կայքէջում հրապարակված տվյալների, ստորագրել է 41 լրատվամիջոց, լրագրողական 8 միություն: Այս փաստաթղթի հինգերորդ բաժնով սահմանվում է հարգանքը զանազան խմբերի ներկայացուցիչների և համամարդկային արժեքների նկատմամբ՝ որպես մասնագիտական էթիկական նորմ: Այս սկզբունքի պահպանումը, համաձայն փաստաթղթի, նշանակում է, որ խմբագրությունը և լրագրողը պարտավոր են.

<sup>10</sup> Տե՛ս <http://ypc.am/self-regulation/?lang=hy>:

«5.1. խոսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, բաղաբական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը»<sup>11</sup>:

Ուշագրավ է, որ վերոնշյալ կանոնագրին միացած 41 լրատվամիջոցներից 19-ը մարզային ՉԼՄ-ներ են, այս ցանկում չկան հանրապետական նշանակության հեռուստաընկերությունները (ցանկում ներառված են միայն Երկիր Մեդիա և Հայկական երկրորդ հեռուստաալիքները), ինչպես նաև վարկանշային համակարգերի համաձայն առաջատար դիրքեր զբաղեցնող այնպիսի առցանց լրատվամիջոցներ, ինչպես News.am, 1in.am, Azatutyun.am և այլն: Միևնույն ժամանակ, կանոնագիրը չստորագրած լրատվամիջոցներին առնչվող հարցերը կարող են քննարկվել Դիտորդ մարմնի կողմից միայն վերջիններիս համաձայնության դեպքում: Այսպիսով, չնայած մասնագիտական էթիկական նորմերը սահմանող փաստաթղթի առկայությանը՝ ինքնակարգավորման այս մեխանիզմի գործունեությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով դրան միանալու և դրա ազդեցությունը կրելու կամավորական սկզբունքը:

<sup>11</sup> Տե՛ս [http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics\\_arm.pdf](http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf):

## Գլուխ 2

### **Զրպարտությունն ու վիրավորանքը լրատվամիջոցներում. իրավական սահմանումներ և նախադեպեր**

Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեղիա անհանդուրժողականությունը հասկանալու համար անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչպես են սահմանվում և մեկնաբանվում զրպարտության, վիրավորանքի, անհանդուրժող խոսքի հասկացությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքում: Սա հնարավորություն կտա հարցադրել և դուրս բերել այն դեպքերը, երբ ՉԼՄ-ի կողմից գրված տեքստը կարող ենք համարել զրպարտություն: Վերլուծության այս մասի հիմնական խնդիրն է պարզաբանել, թե արդյոք օրենքում բավարար չափով հստակ են սահմանված այդ դեպքերը, և ինչ հնարավոր մանիպուլյացիաների կարող է հանգեցնել սահմանման խնդիրը ինչպես ՉԼՄ-ի, այնպես էլ օրենքը մեկնաբանողների՝ իրավական մարմինների կողմից:

Զրպարտության և վիրավորանքի հոդվածների ապաքրեականացումից հետո պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման իրավունքը և կարգը որպես քաղաքացիաիրավական հարաբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ընգրկվեց 2010թ. մայիսին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված են զրպարտության և վիրավորանքի հասկացությունները և պատճառված վնասի հատուցման պայմաններն ու փոխհատուցման չափերը: Հարցն այն է, թե ինչպես են այդ սահմանումները գործառնում իրական դաշտում, ինչպես են դրանք արտացոլվում, օրինակ, ՉԼՄ-ի ներգրավմամբ դատական գործերում:

Այսպիսով, սույն օրենքով զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալների (statement of facts) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում

են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Օրենքը նաև սահմանում է այն դեպքերը, երբ փաստացի տվյալների հրապարակային ներկայացումը չի համարվում զրպարտություն: Դեպքերից մեկի համաձայն զրպարտություն չէ այն հրապարակային խոսքը, որը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ **պայմանավորված է գերակա հանրային շահով:**

Զրպարտության և ոչ զրպարտության դասակարգման և տարբերակման այսպիսի մեկնաբանումը խնդրահարույց է, քանի որ հիմնված է հանրային շահի հասկացության մեծապես սուբյեկտիվ, անհատական ընկալման վրա: Գերակա հանրային շահն ինքը չի մեկնաբանվում այս համատեքստում և, ըստ էության, դառնում է հայեցողական:

Եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա անձը կարող է պահանջել լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը:

Եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հղում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին), կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ, կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա՝ լրատվական գործունեություն իրականացնողը:

Անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասները:

Որպեսզի տեղեկությունը գնահատվի որպես զրպարտություն, այն պետք է համապատասխանի չորս վավերապայմանների, որը առանձնացրել է ՀՀ վճռաբեկ դատարանը իր նախադեպային որոշումներով:

*ա. Անձի վերաբերյալ պետք է ներկայացված լինեն փաստացի տվյալներ, այսինքն՝ ներկայացվածն իր մեջ պետք է պարունակի կոնկրետ, հստակ տեղեկություններ որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, այն չպետք է լինի վերացական:*

- բ. Անձի վերաբերյալ փաստացի տվյալները պետք է ներկայացված լինեն հրապարակային:
- գ. Ներկայացված փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը, այսինքն՝ պետք է լինեն սուտ, անհիմն, ոչ հավաստի:
- դ. Ներկայացված փաստացի տվյալներն իրականում պետք է արատավորեն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Սակայն, կարևոր է նշել, որ դատական արակտիկայում որոշակի խնդիրներ են առաջանում քննության և դատական ակտեր կայացնելիս, քանի որ օրենսդրությամբ նախատեսված չէ տեղեկություններն արատավորող ճանաչելու չափանիշները: Դատարանները գնահատում են տեղեկության զրպարտող բնույթը՝ ելնելով հասարակական ընկալումներից, պատկերացումներից և բարոյական նորմերից: Խնդիրը նաև այն է, որ գերակա հանրային շահով պայմանավորված լինելը անորոշ և լիարժեք չսահմանված սկզբունք է, որտեղ ևս կարող են առաջնային լինել դատարանների/ դատավորների բարոյականության մասին պատկերացումները կամ հասարակական կարծրատիպերը: Մի կողմից այս վավերապայմանները միտված են առավել հստակեցնելու զրպարտության և վիրավորանքի սահմանումները, բայց մյուս կողմից դրանք բավարար կոնկրետ չեն (ինչպես կոտեսենք ՀԼՄ-ի դեմ զրպարտության մեղադրանքով առավել ակնառու դատական գործերից մեկն ամփոփելիս)՝ մասնավոր դեպքերը չափելու և օբյեկտիվ գնահատելու համար: Փորձելով ձևակերպել զրպարտության սահմանումները կոնկրետ դրսևորումների միջոցով, վավերապայմաններից առաջինն, օրինակ, պահանջում է հստակ տեղեկությունների առկայություն որոշակի գործողության կամ անգործության վերաբերյալ, և չի դիտարկում վերացական դատողություններն իբրև զրպարտող: Ստացվում է, որ հայաստանյան հասարակության համար զգայուն երևույթներ, թեմաներ (ինչպես օրինակ Նույնասեռականությունը, Նույնասեռականների իրավունքներով զբաղվելը) կարող են քննարկվել և քննադատվել (հիմնականում պիտակավորված, կարծրատիպային հասկացությունների միջոցով), օրինակ, ՀԼՄ-ում՝ առանց կոնկրետ հասցեագրման և թիրախավորման: Սակայն ինչպես վարվել, օրինակ, Նույնասեռականների իրավունքներով զբաղվող փոքրաթիվ կազմակերպությունների դեպքում, որոնք հեշտ Նույնականացվող են: Արդյունքում կարծես թե անվանական պիտակավորում/զրպարտություն չի իրականացվում, բայց իրականացվում է հեշտ Նույնականացվող զրպարտություն/ պիտակավորում, իսկ օրենքը բավարար զգայուն չէ՝ ընդգրկելու



այս երևույթները: Այսպիսով, վերացականի ձևակերպումը կարող է դիտվել իբրև ոչ թե անառարկա և աննյութ քննարկում, այլ առերևույթ վերացական դատողություններով «փոքր երկրում» գործող կոնկրետ անձանց/կազմակերպություններին թիրախավորելու միջոց:

2010թ. ի վեր ՉԼՄ-ների դեմ բազմաթիվ քաղաքացիական հայցեր են ներկայացվել: «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն» ՉԼՄ-ների ներգրավմամբ զրպարտության և վիրավորանքի հիմքերով 2010-2013թթ. դատական գործերի մոնիթորինգ է իրականացրել, որի արդյունքում արձանագրել են, որ զրպարտությունն ապաքրեականացնելուց հետո՝ մինչև 2013թ. դեկտեմբերի 31-ը ՉԼՄ-ների ներգրավվածությամբ վիրավորանքի և զրպարտության հիմքերով 33 դատարանների վարույթ է ընդունվել 98 քաղաքացիական հայց. 2010թ. հարուցվել է 17, 2011-ին՝ 37, 2012-ին՝ 18, 2013-ին՝ 26 գործ:

2014-2015թթ. վիճակագրական տվյալներ չեն հրապարակվել, սակայն առավել նախադեպային և հետաքրքիր էին ընդդեմ «Իրավունք Մեդիա» ՍՊԸ-ի և վերջինիս խմբագիր Յովհաննես Գալաշյանի երեք հայցերը<sup>1</sup> պատվին և արժանապատվությանը պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, որոնց համար հիմք է հանդիսացել «Իրավունք» թերթի 2014թ. մայիսի 17-ին հրապարակած միևնույն հոդվածը «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամուլ լոբիսգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով:

Հոդվածի վերջում հոդվածագիրը հղում է կատարել մի շարք անձանց ֆեյսբուքյան էջերին և կոչ արել վերջիններիս հետ չչփվել, աշխատանքի չընդունել կամ ցանկացած հարմար առիթով ազատել աշխատանքից: 2014թ. մայիսի 31-ին նշված անձինք գրություն են ուղարկել «Իրավունք» օրաթերթի խմբագրություն, որով տեղեկացրել են, որ հոդվածն իր մեջ պարունակում է վիրավորանք և խնդրել են տեղադրել հերքում, սակայն օրաթերթում 2014թ. հունիսի 3-ին տեղադրվել է նմանօրինակ մեկ այլ հոդված, որով շարունակվել է հնչեցվել վիրավորանք հերքման պահանջ ներկայացրած անձանց հասցեին, մասնավորապես, «սույն կերպարանք», «միտռված կենսագրություն» և նմանատիպ այլ արտահայտություններով: Վերոնշյալ երկու հոդվածները ունեցել են մեծ հրապարակայնություն, տարածվել են տարբեր սոցիալական կայքերում: Հոդվածը պարունակում է մի շարք արտահայտություններ, ինչպիսիք են, «սրանք», «գեյ-քարոզչության դրույթներին հավատացող զոմբիները»,

<sup>1</sup> Առաջինի դեպքում կոդմ են հանդիսացել մի խումբ քաղաքացիներ, երկրորդի դեպքում «Նոր Մերունդ» հասարակական կազմակերպության մի քանի աշխատակիցներ, երրորդի դեպքում՝ «Նոր Մերունդ» հասարակական կազմակերպությունը:

«ազգի և պետության ներքին թշնամիները», որոնք իրենց մեջ պարունակում են վիրավորանք, արատավորում են հայցվորների պատիվն ու արժանապատվությունը, հողվածն իր մեջ պարունակում է ատելության և խտրականության կոչ:

Կարևոր է, որ դատարանը<sup>2</sup> համարել է, որ «լրագրողական ազատությունը ենթադրում է որոշ աստիճանի չափազանցություն, «նույնիսկ սադրանքի դրսևորում լրագրողի կողմից»՝ միաժամանակ նշելով, որ վիճահարույց արտահայտություններում չեն օգտագործվել վիրավորական բառեր և մտքեր: Ձևակերպումները գնահատվել են թեև որոշ չափազանցություններով, սակայն ընդհանուր առմամբ՝ հավասարակշռված: Ավելին, դատարանն արձանագրել է, որ հողվածն ամբողջությամբ համապատասխանում է խոսքի մատուցման լրագրողական ազատության թույլատրելի շրջանակներին, հետևաբար, դատարանը գտնում է, որ *տվյալ հողվածը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով*: Ըստ դատարանի, այս գործում լրագրողի հրապարակած քննադատական խոսքերը կարելի է համարել կարծիք:

Վերոգրյալի ուժով դատարանն արձանագրել է, որ տվյալ լրագրողի կողմից հիշատակված արտահայտությունների միջոցով դրսևորվել է սադրանք դրանցում նշված առանձին արտահայտությունների տեսքով, որոնք հայցվորների համար վրդովվեցուցիչ են, ցնցող կամ անհանգստացնող, սակայն տպագրված նյութում տեղ գտած արտահայտությունների միջոցով լրագրողը գործել է բազմակարծության սկզբունքով:

Հայցը մերժվել է և հայցվորներից համապարտության կարգով հօգուտ երկու պատասխանողների՝ «Իրավունք» մեդիա ՍՊԸ և Հովհաննես Գալաջյանի բռնագանձել են 150.000-ական դրամ: Վերաքննիչ դատարանն իր հերթին հարցի քննության արդյունքում պարտավորեցրել է 50.000-ական դրամ վճարել պատասխանողներին: Վճռաբեկ դատարանը մերժել է հայցը որպես վարույթ ընդունելը: Սա այն պարագայում, երբ նմանատիպ գործի շրջանակներում առկա է եղել իրարից տարբեր դատական որոշումներ Նույն խնդրի շուրջ: Այսպիսով, թեև ՀՀ Վճռաբեկ և Սահմանադրական դատարանները իրենց որոշումներով չորս վավերապայմաններ են սահմանել, որոնց առկայությունը պետք է հաշվի առնել դատական ակտ կայացնելիս, սակայն դա բավարար չէ և դատավորներին թույլ է տալիս հայեցողական մոտեցում ցուցաբերել, ինչի մասին վկայում են նաև վերը քննարկած գործի մասին դատական

<sup>2</sup> Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, դատավոր՝ Ռ.Ներսիսյան:

որոշումները, որոնցում մի դատավորի համոզմունքով վիրավորանք և գրպարտություն չկա, իսկ մյուսը հաստատել է «Իրավունք» թերթի կողմից գրպարտության և վիրավորանքի փաստը:

Թե՛ օրենքի, թե՛ առավել մեծ հնչեղություն ունեցած դեպքերից մեկի այս քննությունը ցույց է տալիս իրավական դաշտում առկա բացերը՝ մեղիա անհանդուրժողականության խնդիրները բացահայտելու և առավել ևս կանխարգելելու համար: Ուստի այս ընդհանուր միտումի հասկացմամբ անդրադարձ անենք այն կոնկրետ չափումներին, որոնց հիմքի վրա իրականացվել է մեղիադաշտում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ անհանդուրժողականության դրսևորումների գրանցումը:

## Գլուխ 3

### Ինչպես չափել (ան)հանդուրժողականությունը. ինդեքսի համառոտ նկարագրություն

Հետազոտության շրջանակներում մշտադիտարկումն իրականացվել է երկու թիրախային խմբի առանձնացմամբ, որոնք են՝ իրավապաշտպանները/մարդու իրավունքների պաշտպանները և ակտիվիստները:

Այս ուսումնասիրության շրջանակներում իրավապաշտպանների/մարդու իրավունքների պաշտպանների սահմանման համար հիմք է վերցվել ՄԱԿ-ի համապատասխան սահմանումը: Ըստ այդմ.

*«Մարդու իրավունքների պաշտպան» եզրույթն օգտագործվում է՝ նկարագրելու համար այն մարդկանց, որոնք գործում են անհատապես կամ խմբով՝ մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու համար: Մարդու իրավունքների պաշտպանները լավագույնս սահմանվում են իրենց գործունեությամբ և նրանց գործողությունների ու գործելու համատեքստերի/իրավիճակների նկարագրությամբ: Մարդու իրավունքների պաշտպանների գործողությունների օրինակները չեն սպառում դրանց հնարավոր ամբողջական ցանկը (ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության հարցերով հանձնակատար<sup>1</sup>):*

Ակտիվիստներին բնութագրելու համար օգտագործվում են տարբեր եզրույթներ՝ փոփոխության միտված ակտիվիստներ, բնապահպան ակտիվիստներ, համայնքային աշխատողներ կամ այլք, որոնք կարող են դիտվել իբրև մարդու իրավունքների ակտիվիստներ: Ըստ որոշ տեսակետների, բնապահպան ակտիվիստները մարդու իրավունքների ակտիվիստներ չեն կարող համարվել, քանի դեռ չեն հռչակել շրջակա միջավայրի պահպանությանը զուգահեռ մարդկանց բնապահպանական իրավունքների պաշտպանության և մարդկանց կյանքը փոխելու ցանկության մասին:

<sup>1</sup> Տե՛ս <http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Defender.aspx>.

Հաշվի առնելով վերոնշյալը՝ տվյալ հետազոտության շրջանակներում մշտադիտարկման թիրախ են դիտվել լայն առումով մարդու իրավունքների պաշտպանները, որոնց դերում կարող են հանդես գալ.

ա. **Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվողներ/ փոփոխությանը միտված ակտիվիստներ (կամ վերջիններիս խմբեր)**, ովքեր աշխատում են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներում

բ. **ՀԿ-ներ**

գ. **Մարդու իրավունքների պաշտպանը (օմբուդսմեն), օմբուդսմենի գրասենյակի ներկայացուցիչները**

դ. **Իրավաբաններ**, եթե մեդիան վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)

ե. **Լրագրողներ**, եթե մեդիան վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)

զ. **Քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ**, եթե մեդիան վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)

է. **Այլք (որոշյալ)**, եթե մեդիան վերջիններիս ներկայացնում է որպես մարդու իրավունքների պաշտպանների/փոփոխությանը միտված ակտիվիստների (կամ վերջիններիս խմբի)

ը. **Այլք (անորոշ)**, հիմնականում ներառում է ընդհանրացված հոդումներ, ինչպես ֆեմինիստները, ակտիվիստները և այլն

թ. **Անհայտ/անորոշ** (այն դեպքերում, երբ մեդիան չի սահմանում, թե ով է իրավապաշտպանը)

ժ. **Ակտոր չկա** (սա կարող է լինել այն դեպքերում երբ թիրախը գաղափարն է, ոչ թե որոշակի անձնավորություն/ կազմակերպություն):

Այսպիսով, մարդու իրավունքների պաշտպանները տվյալ հետազոտության համատեքստում դիտվում են իբրև մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող, այս ուղղությամբ գործունեություն ծավալող ցանկացած խմբեր՝ ֆորմալ կամ ոչ ֆորմալ, ինչպես նաև անհատներ, որոնք կարող են կամ լինել այդպիսին, կամ ներկայացվել իբրև այդպիսին լրատվամիջոցների կողմից: Ըստ այդմ, օրինակ եթե խոսքը քաղաքական գործչի մասին է, սակայն լրատվամիջոցը վերջինիս մասին խոսում է իբրև իրավապաշտպանի/մարդու իրավունքների պաշտպանի՝ մնացյալ տեղեկատվությունը մատուցելով այդ լույսի ներքո, ապա տվյալ ակտորը դիտվում

Ե իբրև մշտադիտարկման առարկա, իսկ նրան լուսաբանող նյութը՝ կողմավորման ենթակա: Այսպիսով, առանցքայինը լրատվամիջոցի կողմից համապատասխան դիրքավորումն է, որը հնարավորություն է տալիս տվյալ նյութը համարել կարևոր՝ լրատվամիջոցի՝ իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ ունեցած դիրքորոշման պարզաբանման համար:

Ինչ վերաբերում է ուսումնասիրության համար առանցքային հանդուրժողականության և անհանդուրժողականության սահմանմանը, ապա հիմք են վերցվել հետևյալ սահմանումները:

*Հանդուրժողականությունը սեփական անձից/կազմակերպությունից/խմբից կարծիքների, պրակտիկաների, կրոնական պատկանելության, ազգային պատկանելության և այլ հատկանիշներով տարբերվողների հանդեպ հանդուրժման ունակությունը կամ ցանկությունն է, ինչպես նաև վերջիններիս նկատմամբ անկողմնակալ, ընկալունակ և հավասարակշռված դիրքորոշման կառուցումը:*

*Տոլերացիան կամ հանդուրժումը ինչ-որ բանի կամ որևէ մեկի հանդեպ հանդուրժողական վերաբերմունքի դրսևորման պրակտիկան է:*

*Մերժողական կամ ատելության խոսքը այն խոսքն է, որ հարձակում է իրականացնում անձի կամ խմբի նկատմամբ (ա) վերջիններիս որևէ հատկանիշի հիման վրա, ինչպես գենդերային պատկանելությունը, էթնիկ ծագումը, կրոնական պատկանելությունը, ռասան, ֆիզիկական կարողությունները կամ սեռական կողմնորոշումը, կամ (բ) վերջիններիս կողմից իրականացված գործողությունների, գործունեության ոլորտի կամ նպատակների հիման վրա:*

Այսպիսով, մերժողական խոսքը կարող է դիտարկվել իբրև անհանդուրժողականության կամ չհանդուրժման պրակտիկա կոնկրետ անձի կամ խմբի նկատմամբ՝ վերջիններիս որևէ հատկանիշի հիման վրա, ինչպես գենդերային պատկանելությունը, էթնիկ ծագումը, կրոնական պատկանելությունը, ռասան, ֆիզիկական կարողությունները կամ սեռական կողմնորոշումը կամ վերջիններիս կողմից իրականացված գործողությունների, դրանց ոլորտի կամ նպատակների հիման վրա:

Այսպիսով, Հայաստանում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիա հանդուրժողականության ինդեքսի հաշվարկի նպատակը այս խմբերի նկատմամբ լրատվամիջոցների հանդուրժողականության աստիճանի չափումն է՝ մերժողական խոսքի չափման միջոցով:

Հարկ է նշել, որ մեր կողմից իրականացվել է ոլորտում առկա միջազգային և տեղական տարաբնույթ զեկույցների

և հետազոտությունների ուսումնասիրություն՝ հասկանալու համար այս խնդրի շուրջ առկա մոտեցումները և մեղիադաշտում հանդուրժողականության կամ անհանդուրժողականության չափման հնարավորությունները:

Ըստ այդմ, այդ զեկույցների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ.

- Առկա չէ միջազգային կամ տեղական ամբողջությամբ նույն նպատակին ուղղված որևէ ինդեքս կամ չափողական այլ գործիք, որը հնարավոր կդարձներ ուսումնասիրել այն և կիրառել հայաստանյան իրականության նկատմամբ:
- Տեղական մակարդակում առկա ուսումնասիրություններն ուղղված են հիմնականում ատելության կամ մերժողական խոսքի ուսումնասիրությանը հակամարտության մեջ ներգրավված կողմերի տեսանկյունից, այսինքն՝ օրինակ, թե ինչքանով է մերժողական խոսք տարածվում Հայաստանում Ադրբեյջանի նկատմամբ և հակառակը:
- Ոլորտում առկա են նաև հետազոտություններ, որոնք ուղղված են այս կամ այն հատկանիշի հիման վրա առանձնացված խոցելի խմբերի լուսաբանման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, ինչպես օրինակ՝ էթնիկ փոքրամասնությունների, կրոնական փոքրամասնությունների և այլն: Այս հետազոտությունների տվյալները նույնպես չեն կարող օգտագործվել տվյալ ուսումնասիրության համար, քանի որ վերաբերում են կոնկրետ խմբերի լուսաբանմանը, ոչ թե այդ կամ նաև այլ խմբերի իրավունքների պաշտպանությամբ զբաղվողներին կամ նրանց պաշտպանության գաղափարին: Իհարկե, նման ուսումնասիրությունները լրացուցիչ տեղեկատվություն են տալիս տվյալ խմբերի խոցելիության մասին՝ ենթադրելով, որ եթե խմբի հանդեպ վերաբերմունքը ժխտողական է, ապա այն այդպիսին կլինի նաև վերջիններիս իրավունքների պաշտպանների կամ այդ գաղափարի նկատմամբ ընդհանրապես:
- Առկա են նաև հետազոտություններ, որոնք ուղղված են պարզաբանելու այս կամ այն կառույցի (ինչպես օրինակ ՄԻԴ-ի գրասենյակի կամ միջազգային իրավապաշտպան կառույցների) գործունեության լուսաբանման ինտենսիվությունը մեղիադաշտում: Դրանք նույնպես չեն կարող համարժեք համարվել տվյալ հետազոտության համար, քանի որ այդ ճանապարհով ձեռք բերված տեղեկատվության ճանաչողական պոտենցիալը խիստ սահմանափակ է՝ ելնելով դրված նեղ նպատակից:

Առկա ուսումնասիրությունների մեծ մասը ավելի վաղ շրջանի դիտարկումների ամփոփում է, որոնք թեմատիկ և մեթոդաբանական առումով համադրելի լինելու դեպքում նույնիսկ ժամկետային կոռելություն հարց առաջ կբաշխին:

Այնուամենայնիվ, առկա հետազոտություններից մեկը, որն է՝ 2015թ.-ի Երևանի մամուլի ակումբի հեղինակած «Հայաստանում քաղաքականության երկխոսության շրջանակներում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը» զեկույցը<sup>2</sup>, ներկայացնում է որոշ տվյալներ, որոնք հետաքրքրական են ընթացիկ ուսումնասիրության համար: Չեկույցը հիմնված է տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ արված հարցազրույցների և ֆոկլուս խմբերի, ինչպես նաև ընտրված առցանց և ավանդական լրատվամիջոցների մոնիտորինգի արդյունքների վրա: Այս հետազոտության ուշագրավ արդյունքներից է այն ի հայտ բերված փոխադարձ անվստահությունը, որն առկա է իշխանական կառույցների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և լրատվամիջոցների միջև: Ընդ որում, եթե իշխանություն-քաղաքացիական հասարակություն հարաբերություններում այդ անվստահության հիմքը իշխանությունների դիրքից քաղաքացիական հասարակության ոչ բավարար կոմպետենտությունն է, ապա քաղաքացիական հասարակությունն էլ հակված է չվստահել թե՛ վերջիններիս, թե՛ մեդիային՝ որպես իշխանական կամակատար: Անվստահության այս մթնոլորտն ավելի խորանում է այն պայմաններում, երբ քաղաքացիական հասարակությունում ի հայտ են գալիս տարբեր խմբեր, այդ խմբերի բարդ հարաբերություններ և փոխադարձ անվստահություն՝ արդեն իսկ դաշտի ներսում: Բնականաբար, անվստահության այս օրակարգը չի կարող իր ազդեցությունը չթողնել լրատվամիջոցների կողմից իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիա հանդուրժողականության չափի վրա՝ հաշվի առնելով սոցիալ-քաղաքական այն համատեքստը, որ քննարկված է այս զեկույցի առաջին բաժնում:

Եվ այսպես, վերադառնալով իրականացված ուսումնասիրությանը, հարկ է նշել, որ դրա շրջանակներում մշտադիտարկման միավորը հոդվածն է: Լրատվամիջոցում ցանկացած տեքստ դիտվել է իբրև հոդված: Մշտադիտարկման ենթարկվել է միայն տեքստը և ոչ թե պատկերը, աղյուսակը կամ վիզուալիզացիայի այլ միջոցը: Ըստ այդմ, չնայած լրատվամիջոցներում տեքստի և պատկերի առնչությունները կարիք ունեն պարզաբանման, սակայն հիմնավորված ենք համարել այն ենթադրությունը, որ լրատվամիջոցը միևնույն թեմայի տեքստն ու պատկերը ներկայացնում է միասնական տրամաբանության մեջ: Հետևաբար տեքստային մասի ինֆորմացիան քաղելով՝ հնարավոր է պատկերացում ձևավորել լրատվամիջոցի ընդհանրական մոտեցման վերաբերյալ:

<sup>2</sup> Տե՛ս [http://ypc.am/wp-content/uploads/2015/09/Policy\\_Dialogue-Book\\_arm.pdf](http://ypc.am/wp-content/uploads/2015/09/Policy_Dialogue-Book_arm.pdf)



Ինչևէ, մշտադիտարկման հաջորդ փուլում տեսաձայնային տեղեկատվությունը նույնպես կվերլուծվի, ինչը թույլ կտա առավել հստակեցնել վերոնշյալ ենթադրության հաստատման կամ մերժման հիմքերը: Միաժամանակ կան լրատվամիջոցներ, որտեղ տեսաձայնային տեղեկատվությունը գերակշռող է, այս դեպքում լրատվամիջոցի միայն տեքստային տեղեկատվության մշտադիտարկումը լրատվամիջոցի ընդհանրական դիրքորոշման ներկայացման հավակնություն չունի:

Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեղիա հանդուրժողականության ինդեքսն այսպիսով հիմնվում է նմանատիպ այլ ինդեքսների կազմման միջազգային փորձի և մեղիադաշտի նախնական վերլուծությունների, ինչպես նաև փորձագիտական իրականացված քննարկումների վրա: Այն ներառում է ցուցիչներ՝ իրենց ենթացուցիչներով (տես Աղյուսակ 1):

Ցուցիչների կշռումն իրականացվել է փորձագիտական գնահատականների միջոցով, ինչի արդյունքում փորձագիտական միջինացված գնահատականներով առաջին ցուցիչի կշիռը սահմանվել է իբրև 30%, երկրորդ ցուցիչինը՝ 30%, երրորդ ցուցիչինը՝ 10% և չորրորդ ցուցիչինը՝ 30%:

Առաջին ցուցիչը կոդավորվել է ընտրված լրատվամիջոցների բոլոր թեմատիկ հոդվածների համար, իսկ սկսած երկրորդ ցուցիչից կոդավորվել են այդ լրատվամիջոցների միայն այն հոդվածները, որոնք պարունակել են մերժողական խոսք: Ենթացուցիչներն իրենց հերթին դասակարգվել են անհանդուրժողականության տեսանկյունից ամենացածր նշանակություն ունեցողից մինչև ամենամեծ նշանակություն ունեցողը՝ յուրաքանչյուրին շնորհելով հերթական կարգային միավոր: Միևնույն ժամանակ, եթե որոշ ենթացուցիչներ հանդուրժողականության տեսանկյունից դիտվել են իբրև հավասար նշանակություն ունեցող, ապա դրանք խմբավորվել են մեկ կարգային խմբում: Ենթացուցիչի կոնկրետ դրսևորումը ստացել է 1 նիշը, եթե հանդիպել է տվյալ հոդվածում և 0, եթե տեղ չի գտել այդ հոդվածում: Այն դեպքում, եթե ենթացուցիչի դրսևորումները մի քանիսն են, ապա հաշվարկվել է դրանց տեղի ունենալու հաճախականությունը կոդավորված հոդվածների նկատմամբ: Այսպիսով, ընդհանուր ինդեքսը հաշվարկվել է յուրաքանչյուր ցուցիչի ենթացուցիչներին այս կարգային միավորներ շնորհելու և դրանց դրսևորման դեպքերի հաշվարկի միջոցով՝ դրանց գումարը ամեն ցուցիչի համար բազմապատկելով իր կշռով և գումարելով այլ ցուցիչներով համանման կերպով ստացված արդյունքների հետ: Արդյունքում ստացված պատկերն ըստ էության ցույց է տալիս ոչ թե լրատվամիջոցների դիրքը որոշակի առավելագույն

և նվազագույն անհանդուրժողականության շեմի նկատմամբ, այլ իրենից ներկայացնում է լրատվամիջոցների դասակարգում՝ հարաբերական անհանդուրժողականության տեսանկյունից, այսինքն՝ թե որքանով է ընտրված լրատվամիջոցը անհանդուրժող թիրախային խմբերի նկատմամբ:

#### Աղյուսակ 1

### Ցուցիչ 1. Վիճակագրական տվյալներ և լրատվամիջոցի ընդհանուր բնութագիր

- 1.1 Մեդիա աղբյուրի վարկանիշը
- 1.2 Հաճախականությունը՝ օր/շաբաթ
- 1.3 Հայերեն, թե բազմալեզու
- 1.4 Առցանց, թե նաև տպագիր
- 1.5 Լրատվամիջոցի կողմից ներկայացված նյութում բազմակարծության ապահովումը
- 1.6 Լրատվամիջոցի կողմից ներկայացված նյութի բովանդակությունը

### Ցուցիչ 2. Մեդիայում իրավապաշտպանների և ակտիվիստների լուսաբանման բնութագրիչները

- 2.1 Մերժողական խոսք պարունակող հոդվածների թիվը
- 2.2 Աղբյուրը՝ ուղղակի՝ լրատվամիջոցը, անուղղակի՝ այլ հեղինակի/աղբյուրի մեջբերում, վերապատմում
- 2.3 Ոճը՝ հիմնավորված, պիտակավորված, հեզնական
- 2.4 Բնույթը՝ վերլուծական, գնահատող, հարցազրույց, նկարագրական
- 2.5 Թիրախը՝ ուղղված է անձին, ուղղված է իրավունքների պաշտպանության ընդհանուր հայեցակարգին, ուղղված է կոնկրետ գաղափարին, ուղղված է նախաձեռնությանը/գործողությանը
- 2.6 Աշխարհագրությունը՝ Հայաստան/հայկական և այլ
- 2.7 Մեղադրանքի բնույթը՝ անձնական, թե ավելի լայն (օրինակ, ազգային անվտանգությանը սպառնալիքի տեսանկյունից և այլն)
- 2.8 Հեղինակը՝ արդյոք դիտարկվող նյութը հեղինակ ունի, թե ոչ

### Ցուցիչ 3. Իրավապաշտպանների և ակտիվիստների ներկայացումը մեդիայում

- 3.1 Գեներացիային բնութագրիչի շեշտադրում
- 3.2 Տարիքային բնութագրիչի շեշտադրում
- 3.3 Զաղաքական հայացքների շեշտադրում
- 3.4 Սեռական կողմնորոշման շեշտադրում
- 3.5 Այլ բնութագրիչի շեշտադրում՝ ֆիզիկական խնդիրներ, կրոնական պատկանելություն և այլն

### Ցուցիչ 4. Լսարանի դիտանկյունը/կողավորողի ընկալումը

Մշտադիտարկման ենթարկված լրատվամիջոցների ընտրանքն իրականացվել է հետևյալ սկզբունքներով.

- Ելնելով իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ հանդուրժողականության ինդեքսի հաշվարկի նպատակից՝ թեմատիկ չափանիշի առանձնացում, որն է՝ մարդու իրավունքների պաշտպանության լուսաբանման ինտենսիվությունը տվյալ լրատվամիջոցում:
- Ըստ այդմ, դիտարկվել են առցանց և տպագիր մամուլի հրապարակումները մշտադիտարկման մեկնարկին նախորդող մեկ ամսվա ընթացքում՝ 2015թ. մարտին: Չարկ է նշել, որ տարին Չայաստանում մեկնարկեց հանրային հուզումներ առաջ բերած մի շարք իրադարձություններով և գործընթացներով, ինչպես Գյումրիում բնակվող ընտանիքի սպանությունը ռուսական ռազմաքազայի զինվորի կողմից և դրան հաջորդած հուզումները, Յիմադիր հորհրդարանի ավտոերթի մասնակիցների նկատմամբ իրականացված բռնությունները և այլն: Այս ամենը ենթադրաբար մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակի լուսաբանման ինֆորմացիոն առիթ էր և կարող էր առաջ բերել առցանց և տպագիր մեդիայի կողմից նշված թեմայով առավել ինտենսիվ հրապարակումներ: Յետևաբար նշված մեկ ամսում թեմատիկ լուսաբանումների հաճախականության բացահայտումը տեղեկատվություն է տվել տվյալ լրատվամիջոցի՝ իրավապաշտպանության խնդիրների վերաբերյալ հետաքրքրվածության և որդեգրած դիրքորոշման վերաբերյալ:
- Նախնական դիտարկման արդյունքներով առանձնացվել են առցանց և տպագիր լրատվամիջոցների երեք հիմնական խումբ:
  - Մարդու իրավունքների պաշտպանության և ակտիվիզմի խնդիրները ինտենսիվ լուսաբանող լրատվամիջոցներ – առաջին խումբ
  - Մարդու իրավունքների պաշտպանության և ակտիվիզմի խնդիրները հատվածաբար լուսաբանող լրատվամիջոցներ – երկրորդ խումբ
  - Լրատվամիջոցներ, որոնց լուսաբանման լուսանցքում են գտնվում մարդու իրավունքների պաշտպանության և ակտիվիզմի խնդիրները – երրորդ խումբ

Չանդուրժողական/անհանդուրժողական վերաբերմունքի մասին մեթոդաբանական առումով նպատակահարմար ենք համարել խոսել առաջին խմբում ընդգրկված լրատվամիջոցների մասով, որոնք, հանդիսանալով դաշտում խնդրո առարկա թեմայի առավել հետևողական լուսաբանողները, առավել

հավանական է, որ ձևակերպված ու համակարգված դիրքորոշում ունենային վերոնշյալ խնդիրների վերաբերյալ: Հետևաբար մշտադիտարկման համար ընտրվել են առաջին խմբում ներառված լրատվամիջոցները՝ որպես թեմայի վերաբերյալ դիրքորոշման հիմնական կրողներ: Մինևույն ժամանակ կարևոր է հաշվի առնել, որ մարդու իրավունքների պաշտպանության և ակտիվիզմի թեմաները գլխավոր համախմբության մակարդակում այդքան էլ պոպուլյար չեն՝ ենթադրաբար ցուցանելով թեմայի մարգինալությունը նաև հանրային դիսկուրսիվ դաշտում:

Հետևելով վերոնշյալ չափանիշներին՝ մշտադիտարկման նպատակով ընտրված լրատվամիջոցներն են:

## Աղյուսակ 2


Տպագիր մամուլ	Խումբ
<i>Առավոտ (Aravot.am)</i>	<i>Առաջին</i>
<i>Իրավունք (Iravunk.com)</i>	<i>Առաջին</i>
<i>Հայկական ժամանակ (Armtimes.com)</i>	<i>Առաջին</i>
Առցանց մամուլ	Խումբ
<i>1in.am</i>	<i>Առաջին</i>
<i>A1plus.am</i>	<i>Առաջին</i>
<i>Azatutyun.am</i>	<i>Առաջին</i>
<i>Epress.am</i>	<i>Առաջին</i>
<i>Lragir.am</i>	<i>Առաջին</i>
<i>News.am</i>	<i>Առաջին</i>
<i>Tert.am</i>	<i>Առաջին</i>

Այսպիսով, ընդհանուր առմամբ մշտադիտարկման են ենթարկվել 7 առցանց և 3 տպագիր լրատվամիջոցներ: Հաջորդ բաժիններում ներկայացվում են այս լրատվամիջոցներում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ հանդուրժողականության չափման արդյունքները 2015թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսների համար: Արված եզրակացությունները վերաբերում են ընտրված առցանց լրատվամիջոցների տեքստային թեմատիկ տեղեկատվությանը:

Գլուխ 4

Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիահանդուրժողականության ինդեքսի հիմնական արդյունքները

Ընդհանուր առմամբ լրատվամիջոցներում մշտադիտարկման ժամանակահատվածի համար կողավորվել է 2074 հոդված, որոնք ըստ լրատվամիջոցների բաշխվել են հետևյալ կերպ.



Ըստ իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիա հանդուրժողականության աստիճանի՝ կառուցվում


Է ուսումնասիրված լրատվամիջոցների հետևյալ աստիճանակարգումը՝ ըստ անհանդուրժողականության աստիճանի նվազման.

Աղյուսակ 3


N	Լրատվամիջոց	Ցուցիչ 1	Ցուցիչ 2	Ցուցիչ 3	Ցուցիչ 4	Ընդամենը
1	Iravunk.com	0.71	0.21	0.10	0.70	1.71
2	Aravot.am	0.13	0.07	0.04	0.67	0.90
3	Azatutyun.am	0.12	0.02	0.04	0.69	0.88
4	A1plus.am	0.12	0.03	0.04	0.68	0.87
5	Armtimes.com	0.11	0.05	0.05	0.66	0.87
6	News.am	0.15	0.05	0.04	0.64	0.87
7	1in.am	0.13	0.04	0.05	0.65	0.86
8	Lragir.am	0.12	0.04	0.04	0.64	0.85
9	Epress.am	0.12	0.02	0.03	0.67	0.84
10	Tert.am	0.13	0.01	0.03	0.64	0.81

Ըստ այդմ, ստացվել է ինդեքսի հետևյալ պատկերը:

Պատկեր 2



## Պատկեր 3



Ինչպես երևում է վերևում տրված պատկերից, թեմատիկ հոդվածների ճնշող մեծամասնությունում լրագրողի դիրքորոշումը բացակայում է:

- Ուշագրավ է, որ կողավորման ենթարկված թեմատիկ հոդվածների 91,9% դեպքում դրանք ներկայացնում են միայն 1 տեսակետ, ինչը հիմք է տալիս խոսելու լրատվամիջոցների՝ երկխոսությանը հակված չլինելու և կոնկրետ քաղաքականություն վարելու մասին:
- Բացառությամբ «Իրավունքի», մնացած բոլոր ուսումնասիրված լրատվամիջոցները խուսափում են բացահայտ դիրքորոշում արտահայտելուց, ինչով էլ բացատրվում է «Իրավունքի» ինդեքսի հաշվարկով ակնհայտորեն առավել բարձր ցուցանիշը:
- Հենց այս պատճառով լրատվամիջոցները առավել հակված են ներկայացնել այլ աղբյուրների միջոցով ստացված տեղեկատվություն, մեջբերումներ և վերապատմումներ՝ հնարավորինս բացառելով սեփական սուբյեկտության դրսևորումը: Այստեղ կրկին բացառություն է կազմում «Իրավունքը»:
- Ասվածի տրամաբանական շարունակությունն է նաև առանց հեղինակի նյութերի տարածումը, ինչը անհատական (ան)պատասխանատվության խնդիր է լուծում, ապահովում է դիրքորոշման անդիմությունն՝ նվազեցնելով լրատվամիջոցի խոցելիությունը զրպարտության կամ վիրավորանքի մեղադրանքի առաջադրման տեսանկյունից:

- Այսպիսով, լրատվամիջոցի դիրքորոշումը ներկայացվում է անուղղակի միջոցներով, որոնցից են՝ միայն մեկ տեսակետի վրա կառուցված տեղեկատվության/հոդվածների հրապարակումը, առանցքային մտքի/թիրախավորող արտահայտության ընդգծումը և դրա կրկնումը տարբեր թեմատիկ հրապարակումներում՝ մեջբերման, հղման և այլ ձևերով:
- Բացահայտ կանխակալ վերաբերմունքը սակավ տարածված է, սակայն դրսևորվելիս այն գերազանցապես ունեցել է քաղաքական հիմք ուսումնասիրված բոլոր լրատվամիջոցներում:



## Գլուխ 5

### Իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիադաշտի դիրքորոշման շուրջ որակական դիտարկումներ

Ստորև ներկայացված են հետազոտության ընտրանքում ընդգրկված 10 լրատվամիջոցների աշխատանքի որակական բնութագրերը՝ ըստ այնպիսի գործոնների, ինչպիսիք են հետազոտության թեմայի շրջանակներում կոնկրետ իրադարձությունների շեշտադրումը, վերլուծական հոդվածների առկայությունը/բացակայությունը, հանդուրժող/անհանդուրժող տեսակետների, մեկնաբանությունների լուսաբանումը, լուրերի օպերատիվությունը և այլն:

Ըստ այդմ, ուսումնասիրված լրատվամիջոցները կարելի է դասակարգել երեք խոշոր խմբերի.

- 1 *Իրադարձային լուսաբանում իրականացնող լրատվամիջոցներ*
- 2 *Թեմատիկ հետաքրքրվածություն ցուցաբերող լրատվամիջոցներ*
- 3 *Խմբերի/անհատների թիրախավորում իրականացնող լրատվամիջոցներ*

Ամենամեծ խումբն իրադարձային լուսաբանում իրականացնող լրատվամիջոցների խումբն է, որոնց կայքէջերում իրավապաշտպանների և ակտիվիստների գործունեությանը/ոլորտին/գաղափարներին վերաբերող նյութը հայտնվելու հնարավորություն ունի այն պարագայում, եթե այն դարձել է հանրային հնչեղություն ունեցող տեղեկատվական առիթ: Սակայն այս խմբում էլ առանձնանում են երկու ենթախմբեր՝

- *Քանակական լրատվության խումբ, որում ներառվում են News.am, 1in.am և Tert.am լրատվական կայքերը: Այս խմբի գլխավոր չափանիշը կարճ ժամանակահատվածում նյութերի մեծ թիվն է՝ առավելագույն օպերատիվության ապահովման ակնկալիքով:*

- *Խմբագրական քաղաքականության շրջանակներում իրադարձային լուսաբանում իրականացնող լրատվամիջոցներ, որոնց կազմում են Armtimes.com, Azatutyun.am և Lragir.am կայքերը: Այս պարագայում բացի տեղեկատվական առիթ հանդիսանալուց՝ տվյալ նյութը պետք է համադրվի նաև լրատվամիջոցի առավել լայն խմբագրական քաղաքականության հետ՝ լուսաբանման արժանանալու առավել մեծ հավանականություն ունենալու համար: Սա նշանակում է, որ լրատվամիջոցն օգտագործում է տվյալ նյութը՝ առավել լայն ուղերձներ հղելու համար:*

Թեմատիկ լուսաբանում իրականացնող լրատվամիջոցների շարքում են Aravot.am, Epress.am և A1plus.am կայքերը: Այս լրատվամիջոցներն անդրադառնում են ոչ միայն հանրային լայն հնչեղություն ցուցաբերած դեպքերին և իրադարձություններին, այլև լուսաբանման թեմա են դարձնում նաև այս տեսանկյունից աննկատ թեմաներ:

Նկարագրված երկու խմբերից հստակ առանձնանում է «Իրավունքը»՝ Iravunk.com, որը հստակ թիրախավորում է որոշ խմբերի/անհատների/գաղափարների՝ հանդես բերելով ամենաբարձր անհանդուրժողականություն և դրանով իսկ տարանջատվելով մնացյալ 9 լրատվամիջոցներից:

Լրատվամիջոցներից յուրաքանչյուրի առավել մանրամասն նկարագիրը տրված է ստորև:

## 1in.am

### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Այս լրատվամիջոցն իրեն դիրքավորում է իբրև օպերատիվ լուսաբանում իրականացնող, ուստի աշխատում է ապահովել հանրային հնչեղություն ունեցող թեմայի անընդհատ ներկայացում: Պատկերն այսպիսին է ապրիլ և մայիս ամիսների ընթացքում, քանի որ նույն հաճախականությամբ լուսաբանվում են հանրային հնչեղություն ձեռք բերած ՀԽ անդամների ձերբակալությունն ու ազատ արձակումը, վերջիններիս կողմից կազմակերպված հանրահավաքներն ու հայտարարությունները, նաև հարցազրույցներ անմիջապես մասնակիցների կողմից:

Ինչպես բոլոր լրատվամիջոցների պարագայում, 1in.am-ի ուշադրության կենտրոնում էլ հունիս ամսվա առաջին կեսին գտնվում էին Շանթ Հարությունյանի հայտարարությունը, դրան հաջորդող Նրա և Վարդան Վարդանյանի հացադուլը, Գայանե Առուստամյանի գործը: Երկրորդ կեսին պատկերը կրկին կտրուկ փոխվեց և առաջնային դարձավ այնպիսի

հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող դեպք, ինչպիսին էր «Ոչ թալանին» նախաձեռնության կազմակերպած հանրահավաքները և դրան հաջորդող նստացույցը Բաղրամյան պողոտայում, որտեղ էլ հենց հունիսի 23-ին տեղի ունեցավ բախում ոստիկանների և ցուցարարների միջև, ինչի արդյունքում բերման ենթարկվեց շուրջ 237 քաղաքացի: Հունիս-հուլիս ամիսների հոդվածները այս ամենի շուրջ բացի օպերատիվ տեղեկատվություն տրամադրելուց, նաև լուսաբանում էին այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցչի, քաղաքագետի, իրավապաշտպանի կամ ակտիվիստի մեկնաբանությունները իրադարձությունների վերաբերյալ: Նկատենք, որ հիմնականում ներկայացված են ոստիկանական գործողությունները քննադատող և շարժումը ողջունող դիրքորոշումներ:

Օգոստոս ամսին հոդվածների ճնշող մեծամասնությունը վերաբերում է «Ուտքի Հայաստան» նախաձեռնության հավաքի ժամանակ Հանրապետության հրապարակում տարեց տղամարդուն ոստիկանի կողմից հարվածելուն. օպերատիվորեն ներկայացվել են ոստիկանի, բռնության ենթարկված անձի վերաբերյալ տվյալներ, նաև կան հոդվածներ, որոնցում խոսող ակտորները (նախաձեռնության անդամներ, քաղաքական գործիչներ) քննադատական խոսք են հնչեցնում ոստիկանի պահվածքի վերաբերյալ:

Սեպտեմբեր ամսվա կտրվածքով այս մեդիայի ուշադրության կենտրոնում է եղել թեմայի շրջանակներում ազատամարտիկ Սմբատ Հակոբյանին ծեծի ենթարկելու դեպքը, սակայն բացակայում է մեդիայի դիրքորոշումը դրա շուրջ: Հիմնականում մեդիան լսելի է դարձրել դեպքի շուրջ բացասական/քննադատական արձագանքները (HRW, «Ոչ թալանին»):

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների պատկերը այս մեդիայում ևս չի տարբերվում ընդհանուր մեդիա դաշտում տիրող իրավիճակից: Հիմնականում լուսաբանելով Սահմանադրական փոփոխությունների դիսկուրսը՝ անդրադարձ է արվել նաև, օրինակ, հոկտեմբերի 5-ի ակցիայի ժամանակ ոստիկանական ուժերի գործողություններին, որոնց արդյունքում բերման է ենթարկվել 21 անձ: Այս պարագայում ևս բացահայտ դիրքորոշում չի արտահայտվում, սակայն կարող ենք նկատել, որ դա արվում է միջնորդավորված կերպով, օրինակ, վերնագրերում այնպիսի խոսքերի հղմամբ, ինչպիսիք են. «Մեզ մայրերից գողացել են.

*«Չեք անցկացնի»-ի անդամը խնդրում է գործով վարույթ սկսել», «Ոստիկանության գործողությունները քաղաքական հրահանգով են եղել. փաստաբանները կոչվեն վարչական դատարան»:*

**ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՈՓՈՒԹՅՈՒՆԸ**

1in.am-ը օպերատիվության առումով հիշեցնում է News.am-ին, սակայն առանձնանում է մյուս լրատվական կայքերից աշխատանքային այն սկզբունքով, որ լուրերը ներկայացնում է մեծամասամբ որպես առաջին աղբյուր: Իրադարձությունների շուրջ մեկնաբանությունները, կանխատեսումները և այլն լրատվականը ներկայացնում է հիմնականում անմիջապես քաղաքական գործիչների, իրավապաշտպանների և այլ անձանց հետ սեփական հարցազրույցների միջոցով, իհարկե, նաև որոշ դեպքերում հղումներ տալով այս կամ այն լրատվական թերթերին: 1in.am-ի պարագայում հիմնական մոտեցումը լուրերի իրադարձայնությունն է: Չեն նկատվում հստակ թեմատիկ նախընտրություններ, որոնց հետևողականորեն անդրադարձ արվի՝ հանրության ուշադրությունը հրավիրելու նպատակով: Լուսաբանվում են հիմնական հանրային հնչեղությունն ստացող նորությունները, դեպքերը և դրանց շուրջ արվող մեկնաբանումները:

**A1plus.am****ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

A1plus.am-ի հոդվածները ապրիլ ամսվա ընթացքում հնարավորինս բազմակողմանի են ներկայացնում պատկերը. առկա են և՛ տեղեկատվական բնույթի հոդվածներ իրադարձությունների զարգացման վերաբերյալ (այստեղ ևս շեշտադրումը Հիմնադիր Խորհրդարանի շուրջ կատարվող իրադարձությունների լուսաբանման վրա է), և՛ վերլուծական հոդվածներ տարբեր իրավապաշտպան ՀԿ-ների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների կողմից, որոնց պարագայում ներկայացված են և՛ իշխանական թևի, և՛ ընդդիմադիր թևի ներկայացուցիչների մեկնաբանությունները իրադարձությունների շուրջ:

Պատկերը փոքր ինչ այլ է մայիս ամսվա կտրվածքով. հոդվածները կրում են առավել նկարագրողական բնույթ, կայքը շարունակում է օպերատիվ տեղեկատվություն տրամադրել Հիմնադիր Խորհրդարանի նախաձեռնած հանրահավաքների, հանրային կոչերի, նամակների վերաբերյալ, ինչպես նաև վերջիններիս կողմից կազմակերպված տարբեր ակցիաների ընթացքում մասնակիցների հանդեպ ոստիկանական գործողությունների, հետապնդումների մասին: Մայիս ամսում բացակայում են վերլուծական հոդվածները ու չկան նաև լրատվամիջոցի կողմից արված հարցազրույցներ:

Յունիսը սկսվում է Շանթ Հարությունյանի շուրջ վերոնշյալ իրադարձությունների լուսաբանմամբ, անդրադարձ է կատարվել նաև Գայանե Առուստամյանի դեպքին և մի քանի հոդված՝ Հիւ անդամների ազատ արձակումից հետո արված մեկնաբանումներին, սակայն այս պարագայում ևս ամսվա կտրվածքով ամենաշատ հոդվածները վերաբերվում են Բաղրամյանի դեպքերի լուսաբանմանը, ինչը գրեթե նույն ծավալով շարունակում է գերակա թեմա մնալ նաև հուլիս ամսին: Հոդվածները հիմնականում նկարագրողական բնույթի են և ներկայացնում են նախ օպերատիվ իրավիճակը Բաղրամյանում, բերման ենթարկված ակտիվիստների հանդեպ հարուցված քրեական գործի մասին մի քանի լուր, և հիմնական շեշտը դրված է տարբեր քաղաքական գործիչների, ցույցի մասնակիցների, մտավորականների, իրավապաշտպանների և այլ անձանց կողմից իրադարձությունների մեկնաբանման վրա: Չնայած նրան, որ այս լրատվամիջոցը բացահայտ դիրքորոշում չի արտահայտել Բաղրամյանի դեպքերի և հետագա զարգացումների վերաբերյալ, սակայն նկատվում է, որ լսարանին է փոխանցում իրադարձությունների վերաբերյալ միայն մի կողմի մեկնաբանումները. ցույցի մասնակիցներ, իրավապաշտպաններ, քաղաքական գործիչներ, ովքեր ողջունում են ելկտրաէներգիայի դեմ ուղղված շարժումը և ովքեր հաճախ դառնում են բռնության զոհ հենց քաղաքացիական ակտիվության համար:

Օգոստոս ամսին լրատվամիջոցը շարունակում է լուսաբանել ակցիաների, հավաքների մասնակիցների հանդեպ ճնշման, բռնության դեպքերը (Հիւ անդամին աշխատանքից ազատելը, ակտիվիստներին բերման ենթարկելը, բռնության դեպքերը): Այս ամենի համատեքստում հիմնական խոսող ակտորները ընդդիմադիր թևի ներկայացուցիչներն են, իրավապաշտպաններն ու քաղաքացիական ակտիվիստները, ովքեր ավելի շատ հանդես են գալիս ի պաշտպանություն անհանդուրժողականության թիրախ դարձած խմբերի, անհատների:

Հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին այստեղ ևս պատկերը չի տարբերվում նախորդ լրատվամիջոցներից այն իմաստով, որ հոդվածներում շեշտը դրված է հիմնականում Սահմանադրական փոփոխությունների դիսկուրսի վրա, բայց ի տարբերություն մի շարք այլ լրատվամիջոցների, այստեղ դրանից ընդհանուր առմամբ չի տուժում իրավապաշտպանների, ակտիվիստների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը. հիմնականում լուսաբանվել են թեմայի շրջանակներում տեղի ունեցող կարևոր դեպքերը, իրադարձությունները (Հայկ Կյուրեդյանի դատական գործը, Շահեն Հարությունյանի բռնության դեպքը,

Հիս անդամների հանդեպ քաղաքական ճնշումները, մարդու իրավունքներին առնչվող հետազոտության լուսաբանում և այլն): Այլ խնդիր է, թե ինչքանով են դրանք պահպանում իրենց կշիռը լուսաբանվող այլ թեմաների հոսքի ֆոնին:

#### **ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՎՈՒԹՅՈՒՆԸ**

Alplus.am-ը այն լրատվամիջոցներից է, որ չնայած բացառապես հանրային հնչեղություն ունեցող իրադարձությունների լուսաբանում է իրականացնում, սակայն փորձում է դրանք իրականացնել առավել հետևողական: Այնուամենայնիվ, այս լրատվամիջոցն էլ հակված է լսելի դարձնել միայն մեկ կողմի տեսակետը՝ նախապատվությունը տալով իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ առավել հանդուրժողական տեսանկյունին: Դրանով իսկ դիմում են դիրքորոշման անուղղակի արտահայտչամիջոցի՝ գերծ մնալով սեփական դիրքորոշման բացահայտ արտահայտումից:

### **Aravot.am**

#### **ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

«Առավոտ»-ում նույնպես թեմայի շրջանակներում (Մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող գաղափարի, գործողության, անձի կամ կազմակերպության վերաբերյալ մեղիայի/մեղիայում հանդուրժողականություն) ապրիլ ամսի հոդվածները վերաբերում են Հիմնադիր Խորհրդարանի հանրահավաքների լուսաբանմանը, դրա ներկայացուցիչների կողմից արված մի շարք հայտարարություններին: Ամենամեծ թվով հոդվածները ապրիլի 7-ին Հիս անդամների ձերբակալության մասին են: Լուսաբանումն ընթանում է առավելապես Հիս անդամների, փաստաբանների կողմից մեկնաբանումների միջոցով: Առկա են նաև մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների, միավորումների, քաղաքական գործիչների կողմից արտահայտված կարծիքներ: Տարբերությունը մյուս լրատվամիջոցներից այն է, որ «Առավոտ» օրաթերթը իրադարձությունները փորձել է ներկայացնել առավել բազմակողմանի՝ լուսաբանելով նաև իշխանության ներկայացուցիչների կարծիքներն ու վերաբերմունքը տվյալ խնդրի շուրջ (օր. ՀՀԿ խորհրդի անդամ, ՀՀ ԱԺ Նախագահ Գալուստ Սահակյան, ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյան, ՀՀԿ խմբակցության անդամ Արտակ Դավթյան և այլք), որոնք հիմնականում անհանդուրժող են շարժման անդամների

հանդեպ: Կան հոդվածներ, որոնց անհանդուրժողականությունը հստակ դրսևորվում է նաև վերնագրերում, օրինակ՝

*«Արտակ Դավթյան. «Հիմնադիր խորհրդարան» կոչվող խումբը փորձում է իր հիվանդ, ճիզվիտային գաղափարները պարտադրել մեր հանրությանը»:*

Փաստորեն, չնայած լրագրողի/լրատվամիջոցի դիրքորոշում հրապարակման մեջ չի դրսևորվում, սակայն մեջբերված այլ անհանդուրժող կարծիքի տիրաժավորմամբ լրատվամիջոցը, մտածված թե ոչ, նպաստում է մերժողական խոսքի տարածմանը: «Առավոտ»-ի լրահոսում քիչ չեն նաև այն հոդվածները, որոնք ամբողջությամբ հղում են անում այլ լրատվական կայքերին՝ սեփական դիրքորոշումների ու մեկնաբանությունների բացակայությամբ: «Առավոտ»-ը նաև ուշադրության կենտրոնում է պահում քաղբանտարկյանների ազատության համար պայքարողների ակցիաները, մամուլի ասուլիսները, նրանց հանդեպ ոստիկանական կամայականությունները և այլն, սակայն ոչ թե մեկնաբանելով, այլ ուղղակի արձանագրելով փաստերը:

Մայիս ամսվա պատկերը փոքր ինչ այլ է և ավելի բազմաբևեռ. «Առավոտ»-ը լուսաբանել է ոչ միայն ՀԽ-ի շուրջ ծավալվող իրադարձությունները, այլև մի շարք այլ ակցիաների, կոչերի, դատական գործերի ևս:

Հիմնական թեմաները, որոնք լուսաբանել է մամուլը ուսումնասիրվող թեմայի շրջանակներում, հետևյալն են. Արգիշտի Կիվիրյանի դեմ Կոմիտաս 5-ի գործով հարուցված քրեական գործը, ԲՀԿ անդամ Արտակ Խաչատրյանի ծեծի գործով հարուցված քրեական գործը, ակտիվիստ Գայանե Առուստամյանին ոստիկանների կողմից բռնության ենթարկվելու դեպքը, ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանությանն ուղղված կոչը Հյուսիսային պողոտայում: «Առավոտ»-ում վերոնշյալ թեմաներից որոշների դեպքում առկա են խմբագրական վերլուծական հոդվածներ, ինչպես նաև հղումներ այլ թերթերի վերլուծական հոդվածներին:

Հունիսի սկզբին հոդվածների շեշտադրումը ընկած է Շանթ Հարությունյանի վերոնշյալ հայտարարության և դրա մեկնաբանումների վրա, ինչպես նաև կան մի քանի հոդվածներ լրագրող, ակտիվիստ Գայանե Առուստամյանի և ՀԽ անդամների դատական գործերի վերաբերյալ: Պատկերը կտրուկ փոխվում է ամսվա վերջում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով, որոնք լինելով ամենախրաղարձային և հանրային հնչեղություն ստացածը, ողողեցին ամբողջ մամուլը մինչև օգոստոս: Խոսքը «Ոչ թալանին» նախաձեռնության կազմակերպած նստացույցի

Ժամանակ հունիսի 23-ի առավոտյան ոստիկանական ուժերի գործադրման մասին է, ինչին հաջորդեց մինչև հունիսի 6-ը տևած նստացույցը: «Առավոտ»-ի հոդվածներում կան և՛ օպերատիվ տեղեկատվություն հաղորդող, և՛ մի շարք ակտիվիստների, քաղաքական գործիչների, մտավորականների կողմից դեպքերի մեկնաբանողական հոդվածներ, որոնցում հիմնական շեշտը ոստիկանական բռնի գործողությունների քննադատության վրա է դրված: Այս դեպքերին հաջորդող ակցիաները, ցույցերը, հայտարարությունները ևս հետևողականորեն լուսաբանվել են:

Ինչպես «Յայկական ժամանակ»-ի դեպքում, այնպես էլ «Առավոտ»-ում հետազոտության թեմայի շուրջ հոդվածները օգոստոս ամսից սկսած կտրուկ նվազում են համեմատաբար ավելի քիչ աղմկահարույց դեպքերի արդյունքում և Սահմանադրական փոփոխությունների ծրագրի առաջնային պլան գալու արդյունքում: Հիմնական թեման օգոստոսի 4-ին ՀԻՄ աջակից Սյուզի Գևորգյանի վրա կատարած հարձակումն էր, որի մասին հոդվածներում խոսող ակտորները (ՀԻՄ անդամներ, տուժած) ներկայացնում էին այն որպես ոստիկանական գործողություն:

Այստեղ ակտիվ օգտագործվում է վերնագրի միջոցով հստակ ասելիք փոխանցելու ռազմավարությունը.

*«Ռեժիմի շները՝ հաստավզերը, գիշերը հարձակվել էին աղջկա վրա».* Գևորգ Սաֆարյան», «Ոստիկանները 18-20 տարեկան աղջնակի վրա ձեռք են բարձրացրել, փառք Աստծո, որ չեն բռնել»:

Այս ամենին հաջորդում են սեպտեմբեր ամսին տեղի ունեցած անհնազանդության երթի մասին հոդվածները, որի ժամանակ 5 ակտիվիստների բերման ենթարկեցին, քաղբանտարկյալ Շանթ Հարությունյանի որդի Շահեն Հարությունյանին, ազատամարտիկ Սմբատ Հակոբյանին բռնության ենթարկելու դեպքերը: Հիմնականում խոսող ակտորներն այս դեպքերում անհանդուրժողականության թիրախ դարձած անձիք են կամ նրանց համախոհները, ում քննադատական խոսքն ուղղվում է ոստիկանական գործողություններին և հնարավոր պատվիրատուներին (հիմնականում իշխանություններին): Հաջորդ աղմկահարույց դեպքը, որ մեղիադաշտում ուշադրության կենտրոնում էր հայտնվել, հոկտեմբերի 5-ին ԱԺ շենքի դիմաց ակցիայի մասնակիցներին բերման ենթարկելն էր. հիմնական խոսքը, որ փոխանցվում է հոդվածների միջոցով լսարանին, պարունակում է քննադատություն ոստիկանական գործողությունների և հավանական պատվիրատուների հանդեպ, որոնք են իշխանության թևի ներկայացուցիչները (այս մասին լրատվամիջոցում խոսող ակտորներ՝ ՄԻՊ, ՀԱԿ, «Չեք անցկացնի» և այլք): Այս ամենի համատեքստում



լրատվամիջոցի կարծիքը երևում է միջնորդավորված կերպով. խոսող/մեկնաբանող ակտորների ընտրություն, վերնագրերի ձևակերպումներ.

*«ՀԱԿ-ը դատապարտում է ոստիկանության «խայտառակ գործողությունները», «Ցուցարարը դեմքի շրջանին ոստիկանի կողմից ծնկի հարված է ստանել», «Ոստիկանությունը գտել է Բաղրամյան պողոտայում իրականացված բռնությունների արդարացումը»:*

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՎՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով, իրադարձային շղթան աշխատում է նաև այս թերթի պարագայում՝ ապահովելով թեմատիկ առավել լայն լուսաբանում հանրային հնչեղություն ստացող իրադարձությունների ժամանակ: Սակայն ուշագրավ է նաև այլ դեպքերի լուսաբանման միտումը, ինչպես նաև բազմակարծության առերևույթ ապահովումը, որը սակայն, ընտրողական մեջբերումների և մանավանդ վերնագրերում այդպիսի մեջբերումների օգտագործման դեպքում դառնում են անհանդուրժողականության կամ մերժողական խոսքի տարածման միջոց<sup>1</sup>: Այլ կայքերի և աղբյուրների օգտագործումը թեմատիկ լուսաբանման ընթացքում նույնպես ընտրության չափանիշների հարց են առաջ քաշում՝ անուղղակիորեն ցուցադրելով լրատվամիջոցի դիրքորոշումը ուսումնասիրվող թեմայի շրջանակներում<sup>2</sup>: Այսպիսով, տեսնում ենք, թե ինչպես մի լրատվամիջոցի դեպքում խնդիր է հակառակ կողմի տեսակետները ներկայացնելը ընդհանրապես, իսկ մյուսի պարագայում՝ այդ տեսակետների ներկայացման ձևը:

## Armtimes.com

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Ապրիլ-մայիս ամիսներին ուսումնասիրվող թեմայի շրջանակներում (Մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող գաղափարի, գործողության անձի կամ կազ-

<sup>1</sup> \*«Ամոթ է, վերջ տվեք խարդավանքներին». գյումրեցի ատամնաբույժը՝ Հիմնադիր խորհրդարանի անդամներին, \*«Այնպես չի, որ դուքնկեթով ծեծել են, բերեք մրջյունից փիղ չսարքենք». Շարմազանով, \* «Սերժը թաղի ծեզ». ՀՀԿ տատիկը՝ «Կարմիր քարտին»:

<sup>2</sup> \*«Հենց դրա համար է պետք բոլորին ձերբակալել». «Իրատես de facto», «Բողոքի ակցիան մարում է, հալվում, ինչպես Եսկիմոն ամռան տապին». «Հայոց աշխարհ», \*«Ամեն զնով Հանրապետության իրապարակում նստացույց անելու այդ մղումը մտասնեռման է նմանվում. «Հայոց աշխարհ»:

մակերպության վերաբերյալ մեդիայի/մեդիայում հանդուրժողականություն) «Յայկական ժամանակ» օրաթերթի հոդվածների ճնշող մեծամասնությունը ուղղված է եղել Հիմնադիր հորհրդարան կուսակցության «100-ամյակն առանց ռեժիմի» շարժման ընթացքում որոշակի իրադարձությունների լուսաբանմանը: Դրանց առանցքում Գյումրիում անցկացված երթի ժամանակ շարժման մասնակիցներից Հրաչիկ Միրզոյանի դանակահարումն էր և Հիմնադիր հորհրդարանի 6 անդամների ձերբակալությունն էր ապրիլի 24-ի հնարավոր զանգվածային անկարգությունները կանխելու պատճառաբանությամբ: Լրատվամիջոցը չունի արտահայտված դիրքորոշում և լուսաբանել է միայն ոստիկանության կողմից իրականացված գործողությունները և դրանց հանդեպ ՀԽ անդամների արձագանքները: Սակայն կարող ենք օրաթերթի վերաբերմունքը նկատել այնտեղ, թե ինչպես է այս կամ այն իրադարձության լուսաբանումից հետո ներկայացվում իրադարձության համատեքստը՝ կրկնվող հիշեցումների միջոցով: Հրաչիկ Միրզոյանի դանակահարության պարագայում, օրինակ, այն հետևյալն է՝

*«Հիշեցնենք, որ մարտի 28-ին «100-ամյակն առանց ռեժիմի» շարժումը հանրահավաք էր անցկացրել Գյումրիում, որի ժամանակ դանակահարել էին հանրահավաքի մասնակիցներից Հրաչիկ Միրզոյանին»:*

Ուշագրավ է, որ լրատվամիջոցում իրադարձությունները մեկնաբանում են առավելապես ընդդիմադիր քաղաքական գործիչները: Տեղի ունեցած գործողությունները հիմնականում մեկնաբանվում են որպես քաղաքական հայացքների համար իշխանության կողմից հետապնդում, հալածանք և այլն: Գրեթե ներկայացված չեն այլ արձագանքները:

Մայիս ամսին թերթը ներկայացրել է նաև մի շարք հրապարակումներ լրագրող, ակտիվիստ Գայանե Առուստամյանին ոստիկանների կողմից ձերբակալելու և բռնության ենթարկելու մասին, ով փողոցն անցնելիս իրեն սուլող ոստիկանին դիմել էր (ըստ ոստիկանների) վիրավորական արտահայտությամբ: Հոդվածներում հիմնականում արտահայտվում են ակտիվիստի համախոհների տեսակետները, և չկա բացի պաշտոնական հաղորդագրությունից այլ մեկնաբանումներ կամ հարցազրույցներ ոստիկանական մարմնի կամ դատախազության կողմից: Այստեղ լրատվամիջոցի/լրագրողի դիրքորոշումը արտահայտվում է աղբյուրների ընտրության միջոցով, այնինչ լրատվության որակը կարող էր շահել, եթե լինեին բոլոր կողմերի տեսանկյունները, ինչպես նաև լրագրողի պարզորոշ և հստակ առանձնացվող դիրքորոշումը:

Թեմատիկայի շրջանակներում լուսաբանման ինֆորմացիոն առիթները փոփոխություն են ապրում հունիսին: Մասնավորապես, հունիսի սկզբին լուսաբանվել են հողվածներ Շանթ Զարությունյանի այն հայտարարության վերաբերյալ, որ իր անվտանգության հետ կապված ԱՄՆ վերնախավից բխող սպառնալիքներ է տեսնում, ինչպես նաև հաղորդվել է հացադուլ հայտարարած Շանթ Զարությունյանի հետագա վիճակի մասին: Զողվածների մեծամասնությունը վերաբերում է «Ոչ թալանին» խմբի կողմից էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված նստացույցի մասնակիցների հանդեպ ոստիկանական ուժերի օգտագործմանը և 237 քաղաքացու բերման ենթարկելու փաստին: Բաղրամյանի նստացույցի ցրելը, դրան հաջորդած Ազատության հրապարակի նստացույցը/հացադուլը հունիս ամսին ևս եղել են լրատվամիջոցի ուշադրության կենտրոնում (օպերատիվ իրավիճակ ցույցերի ժամանակ, արված հայտարարություններ/ելույթներ, բերման ենթարկվածների թիվ, մասնակիցների կողմից ստացված վնասվածքներ և այլն): Թերթում տեղ են գտել նաև այս իրադարձություններին առնչվող մեկնաբանող հոդվածներ մեծամասամբ ընդդիմադիր թևի քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից: Էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ շարժմանն առնչվող խմբագրական հոդվածներ ևս տեղ են գտել թերթում, որոնք քննադատական համատեքստում են ներկայացնում ոստիկանական ուժերի կիրառումը: Նկատվում է, որ ավելի շատ լուսաբանվել են այս կամ այն ակտորի կողմից ոստիկանական գործողությունները քննադատող հոդվածներ: Այսպիսով, թեմային անդրադարձը խիստ սահմանափակ է և ունի կոնկրետ ուղղվածություն:

Սկսած օգոստոս ամսից հետազոտության թեմային առնչվող հոդվածները գնալով նվազում են: Դա կարող է պայմանավորված լինել նրանով, որ այս շրջանում առաջնային հանրային ինչեղություն և նշանակություն ունեցող թեման Սահմանադրական փոփոխությունների նախագիծն էր: Սա ևս հաստատում է, որ լուսաբանման առիթ են հանդիսանում հիմնականում իրադարձային տրոհությունները, ոչ թե թեմաները: Օգոստոս ամսի նյութերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է օգոստոսի 21-ին Հանրապետության հրապարակում «Ութի Հայաստան» նախաձեռնության կազմակերպած հավաքի ժամանակ 67-ամյա Հակոբ Նազարյանի հանդեպ ոստիկանական բռնության դեպքին: Եվ՝ ընդդիմադիր թևի, և՛ ոստիկանության, դատախազության հայտարարությունների լուսաբանմանը զուգահեռ, լրատվամիջոցը նաև իր բացասական վերաբերմունքն է արտահայտել դեպքի վերաբերյալ:

Սեպտեմբեր ամսին թեմայի շրջանակներում լուսաբանվող հոդվածները ևս վերաբերվում են տեղի ունեցող հավաքներին, երթերին, որտեղ ներկայացվում են հավաքի մասնակիցների և ոստիկանների միջև եղած բախումները, հնարավոր պրովոկացիաները, ձերբակալությունները և այլն (Շահեն Հարությունյանին ֆուտբոլային խաղի ընթացքում իրականացրած ակցիայի ժամանակ բռնության ենթարկելը): Որպես առավել աղմկահարույց և, հետևաբար, հոդվածներում ավելի շատ արծարծվող թեմա՝ ազատամարտիկ Սմբատ Հակոբյանին ծեծի ենթարկելն էր. օպերատիվ տեղեկատվություն առողջական վիճակի մասին, քննադատական հայտարարություններ ընդդիմադիր թևի՝ հատկապես ՀՆ-ի կողմից, ոստիկանական գործողությունների/ հայտարարությունների լուսաբանում: Սեպտեմբեր ամսի հոդվածները աչքի են ընկնում մի կարևոր հանգամանքով ևս. համեմատաբար ավելի մեծ քանակ են կազմում խմբագրական հոդվածները, որոնցում առկա քննադատական խոսքը ուղղված է ոստիկանական համակարգին, նրանց առանձին գործողություններին սոցիալական ցանցերում, հավաքների ընթացքում և այլն:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ևս գրեթե բացակայում են հոդվածները հետազոտության թեմայի շուրջ: Սակավաթիվ հոդվածներն առնչվել են նախ հոկտեմբերի 5-ին Աժ շենքի մոտ անցկացված ակցիայի ժամանակ ոստիկանների գործողություններին (բերման են ենթարկել ակցիայի մասնակից թվով 21 քաղաքացու): Սա այն քիչ հանդիպող դեպքերից էր այս լրատվամիջոցում, որ թեև աննշան շեշտադրմամբ՝ լուսաբանվել է ակցիայի ընթացքում նախաձեռնության գործողությունների վերաբերյալ քննադատական խոսք ևս: Երկրորդ թեմատիկ անդրադարձը արվել էր քաղբանտարկյալների ազատության կոչով երթին, 2013թ. նոյեմբերի 5-ին Անոնիմուսների երթի ժամանակ ձերբակալություններին և երկու տարի անց՝ 05.10.2015-ին, 2 տարվա ազատազրկման դատապարտված Արմեն Հովհաննիսյանի ազատ արձակմանը:

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՈՓՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի է ասել, որ թերթը լուսաբանում է միայն այն իրադարձությունները, որոնք այս կամ այն տեսանկյունից հասարակական հնչեղություն են ստանում: Այլ կերպ ասած՝ իրավապաշտպանների և ակտիվիստների գործունեությունը կամ նրանց առնչվող ցանկացած այլ թեմայի լուսաբանումը առօրեական չէ, այլ պահանջում է հստակ ինֆորմացիոն առիթ:

Միևնույն ժամանակ, չնայած թեմայի ներկայացումը տեղի է ունենում հիմնականում իշխանական գործողությունների քննադատության համատեքստում, սակայն լրատվամիջոցի կողմից որևէ իրադարձության, գործողության, գաղափարի վերաբերյալ դիրքորոշման արտահայտումը տեղի է ունենում սահմանափակ թվով դեպքերում: Լրատվամիջոցը նախընտրում է թեման ներկայացնել այլ անձանց/կազմակերպությունների դիրքորոշումների միջոցով՝ նախապատվությունը տալով ընդդիմադիր հայացքներ ունեցողներին և դրանով իսկ անուղղակիորեն արտահայտելով նաև սեփական դիրքորոշումը: Հակառակ կողմի կարծիքները, նույնիսկ քննադատական համատեքստում, գրեթե լսելի չեն թերթում:

## Azatutyun.am

### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Առանձնահատկությունն այն է, որ բացի տարբեր (ան)հանդուրժող տեսակետների, մեկնաբանությունների լուսաբանումից, ապրիլամսվա ընթացքում ներկայացված են նաև փորձագետների մեկնաբանումները իրադարձությունների շուրջ: Ներկայացված են հարցազրույցներ տարբեր իրավապաշտպանների, իրավագետների՝ այդ թվում նաև հենց Հիմնադիր Խորհրդարանի փաստաբանների հետ, ովքեր պատկերը ներկայացնում են իրավական հարթությունում՝ համարելով, որ Հայաստանի իշխանությունները քաղաքական հետապնդումներ են իրականացնում նրանց նկատմամբ: Ազատությունը լուսաբանել է ամսվա ընթացքում մարդու իրավունքների ոլորտին առնչվող հետազոտությունները, որ հրապարակվել են այդ ժամանակ, քաղբանտարկյանների պաշտպանությանն ուղղված բողոքի երթերի, հանրահավաքների ընթացքը և այլն:

Մայիս ամսին անդրադարձը նույնպես հիմնականում միևնույն իրադարձություններին է, ինչ և մյուս լրատվամիջոցների դեպքում (Հիս անդամների ազատ արձակում, բողոքի ակցիաներ՝ ուղղված քաղբանտարկյալների ազատությանը, Գայանե Առուստամյանի հանդեպ բռնություն): Բացակայում են թեմայի շրջանակներում վերլուծական հոդվածները:

Հունիս ամսին Azatutyun.am լրատվականում մեծ տեղ են զբաղեցնում Բաղրամյանի դեպքերին առնչվող հոդվածները. հատկապես շատ են միջազգային իրավապաշտպան և այլ կազմակերպությունների արձագանքները, տեղի իրավապաշտպան կազմակերպությունների, քաղաքական գործիչների, ցույցի մասնակիցների մեկնաբանումները

իրադարձությունների շուրջ: Այս պատկերը շարունակում է թեմատիկ առումով նույնը մնալ նաև հուլիս ամսին: Նկատվում է միտում, որ հոդվածների վերնագրերում հիմնականում արտահայտվում է քննադատական խոսք ոստիկանական գործողությունների հանդեպ տարբեր ակտորների կողմից (իրավապաշտպաններ, քաղաքական ընդդիմադիր գործիչներ, ակտիվիստներ):

Օգոստոսին, ի համեմատ այլ լրատվականների, մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում գտնվող հոդվածները գրեթե անկում չեն ապրել քանակական և որակական առումով: Այս ընթացքում լրատվականը շարունակում է տեղեկատվություն տրամադրել՝ առանց անհանդուրժողականության այս կամ այն դեպքի վերաբերյալ բացահայտ դիրքորոշում արտահայտելու: Հիմնական անդրադարձը արվել է ՀԻ անդամների հանդեպ տարբեր անհանդուրժողական դրսևորումներին (Չուգասզյանի՝ երկրից չհեռանալու արգելանք, Գևորգ Սաֆարյանին աշխատանքից ազատելը): Այս համատեքստում խոսող ակտորները բացառապես ՀԻ անդամներն են և չի ներկայացվում մյուս կողմերի մեկնաբանումները, ինչը կարող ենք դիտարկել իբրև անհանդուրժողականության թիրախ դարձած անձանց/կառույցներին աջակցություն: Սեպտեմբեր ամսին անդրադարձ է արվել Հայկ Կյուրեղյանի դատական գործին՝ առանց մեկնաբանության լուսաբանելով միայն դատական գործընթացը: Հաջորդ թեմատիկ անդրադարձը վերաբերում է սեպտեմբերի 12-ին էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված բողոքի ակցիայի ժամանակ տեղի ունեցող իրադարձություններին՝ ցույց ցրելը, ցուցարարներին ոստիկանություն տանելը և այլն:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին հոդվածները հիմնականում վերաբերում են անհանդուրժողականության այն դեպքերին, որոնք տեղի են ունեցել Սահմանադրական փոփոխությունների դեմ ուղղված հավաքների, ակցիաների ժամանակ: Azatutyun.am-ի լրատվության գլխավոր միտումն այն է, որ համեմատաբար լրատվականների՝ առավել օպերատիվ ներկայացրել է «Չեք անցկացնի» նախաձեռնության անդամների հանդեպ նոյեմբերի 1-ի ոստիկանական բռնությունները, դրան հետևած քննադատական կոչերը և այլն, ինչը, նկատենք, ոչ բոլոր լրատվամիջոցներն են կարևորների շարքին դասել և լավագույն դեպքում մեկ կամ երկու տեղեկատվական հոդվածով են սահմանափակվել: Մյուս իրադարձությունը նոյեմբերի 5-ին Ազատության հրապարակում անցկացվող ակցիան էր՝ նվիրված քաղաքատարկյալների ազատության հարցին:

### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Կարելի է եզրակացնել, որ մարդու իրավունքների պաշտպաններին և ակտիվիստներին առնչվող իրադարձություններն ու գործընթացները Azatutyun.am-ի քիչ թե շատ կայուն հետաքրքրություններից են, որոնց լուսաբանումը իրականացվում է տարբեր ակտորների ներգրավման միջոցով՝ խուսափելով սեփական մեկնաբանություններից և դիրքորոշման արտահայտումից: Սեփական դիրքորոշման անուղղակի դրսևորումը արտահայտվում է ակտորների ընտրությամբ, այսինքն, թե ում խոսքն է լսելի դարձվում լրատվամիջոցի հրապարակումների միջոցով: Այս տեսանկյունից հիմնական հնչող խոսքը թիրախային խմբերի հանդեպ հանդուրժողական խոսքն է: Միևնույն ժամանակ, ի տարբերություն Epress.am-ի, որը նույնպես կայուն հետաքրքրություն է ցուցաբերում թեմայի նկատմամբ, Azatutyun.am-ի լրատվությունն այնուամենայնիվ ոչ թե «աննշան» դեպքերի կամ ցանկացած դեպքի լուսաբանում է, այլ թրենդային դեպքերի առավել մանրամասն լուսաբանում: Կարող ենք խոսել Azatutyun.am-ի կողմից իրավախախտումների և ակտիվիստների հանդեպ հարձակումների շուրջ զգայունության մասին, քանի որ այստեղ ընդհանուր հոդվածների քանակական փոքր ծավալի պայմաններում 1-2 հոդվածն առավել մեծ կշիռ է ձեռք բերում, քան այն լրատվամիջոցներում, որտեղ տվյալ դեպքի վերաբերյալ կարող է քանակապես ավելի շատ նյութ գրվել, որոնք, սակայն, իրենց մեծաթիվ լրահոսի մեջ համամասնությամբ քիչ կշիռ ունեն: Իհարկե, հարկ է ևս մեկ անգամ շեշտել, որ խոսքը տեքստային տեղեկատվության մասին է:

## Epress.am

### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Ապրիլ ամսվա կտրվածքով Epress.am լրատվական կայքի լուսաբանումը նույնպես իրադարձային է՝ Հիմնադիր հորհրդարանի շուրջ կատարվող իրադարձությունների վրա կենտրոնացումով: Հոդվածները հիմնականում նկարագրում են իրավիճակը: Բացակայում է լրագրողի կարծիքը այս կամ այն դեպքի շուրջ: Սակայն ի տարբերություն մշտադիտարկման ենթարկված մի շարք այլ լրատվամիջոցների՝ այս դեպքում նկատվում է, որ լրատվամիջոցը ուշադրության կենտրոնում է պահում մարդու իրավունքներին առնչվող բոլոր իրադարձությունները՝ ներառյալ այս կամ այն տիպի հետազոտական տվյալների լուսաբանումը, որոնք

վերաբերվում են մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր առմամբ: Epress.am-ի նորությունները տարբերվում են նաև նրանով, որ չի շեշտադրվում իրադարձությունների մեկնաբանությունը մի շարք հանրային ճանաչում ունեցող անձանց կողմից, ինչը նկատելի է մյուս լրատվամիջոցների մոտ:

Մայիս ամսվա ընթացքում Epress.am-ի հոդվածները մարդու իրավունքների պաշտպանության թեմայի շուրջ այդքան էլ շատ չեն և կրում են տեղեկատվական բնույթ, զերծ են մեկնաբանումներից: Հիմնականում լուսաբանվել է լրագրող, հանրային գործիչ Գայանե Առուստամյանի բռնության դեպքը ոստիկանների կողմից, քաղաքատարկյալների ազատությանն ուղղված ակցիաները և Վարդգես Գասպարիի դեմ հարուցված նոր վարչական վարույթը ոստիկանին վիրավորելու դեպքի առթիվ:

Հունիսին լրատվամիջոցը շարունակում է մարդու իրավունքներին առնչվող դեպքերի լուսաբանումը՝ մասնավորապես Շանթ Հարությունյանի հայտարարությունը ԱԼԾ վերնախափի կողմից իրեն ուղղված սպառնալիքների մասին<sup>3</sup>, նրա և Վարդան Վարդանյանի հացադուլը, Գայանե Առուստամյանի դատական գործը, և իհարկե, ամսվա երկրորդ կեսից արդեն նկատվում է ուշադրության կենտրոնացում Բաղրամյանի դեպքերի վրա, որը շարունակվում է հուլիս ամսին ևս: Epress.am-ը օպերատիվորեն լուսաբանում է բոլոր իրադարձությունները՝ կապված հանրահավաքի ժամանակ տեղի ունեցող միջադեպերի, ձերբակալությունների հետ, կան նաև վերլուծական հոդվածներ, որոնք փորձում են քիչ թե շատ հավասարակշռված ներկայացնել իրավիճակը:

Սեպտեմբեր ամսին Epress.am-ը շարունակել է տեղեկատվություն տրամադրել իրավապաշտպանների, քաղաքացիական ակտիվիստների, վերջիններիս նախաձեռնած ցույցերի, ակցիաների մասին: Հոդվածներում հիմնականում տեղեկատվական աղբյուր են հանդիսանում անհանդուրժողականության թիրախ դարձած անձիք: Լրատվությունը վերաբերվել է Սմբատ Հակոբյանին ծեծի ենթարկելու, Հայկ Կյուրեղյանի դատական գործի, Բաղրամյանի դեպքերի առթիվ հարուցված քրեական գործին, Շահեն Հարությունյանի հանդեպ բռնության դեպքին, «Ոչ թալանին»-ի ակցիային:

Հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին լրատվականի ուշադրության

<sup>3</sup> Շանթ Հարությունյան. «Դիմել եմ «Վարդաշեն» ԶԿՀ պետին, որպեսզի ինձ և ընկերներին տեղափոխեն բանտայնուց, քանի որ ռուսական ԿԳԲ-ն ՀՀ ԿԳԲ-ի իր գործակալների միջոցով ուզում է ինձ սպանել, մասնավորապես՝ գեներալ Արզուման Հարությունյանը, ով ոչ միայն ռուսական, այլև Ադրբեջանի ԿԳԲ-ի գործակալ է, և գիտի, որ ես տեղեկություն ունեմ այդ մասին»:



կենտրոնում են եղել Սահմանադրական փոփոխությունների շուրջ զարգացող իրադարձությունները: Epress.am-ի առանձնահատկությունն այս առումով այն է, որ տվյալ թեմայի շուրջ տեղեկատվական ինֆորմացիայի տրամադրմանը զուգահեռ ուշադրության կենտրոնում է շարունակել մնալ իրավապաշպան կառույցների, ակտիվիստների, առանձին ակցիաների ժամանակ միջադեպերի լուսաբանումը, ինչը չենք կարող ասել մյուս լրատվականների պարագայում, որոնք այդ ամիսների ընթացքում տեղի ունեցած ասիանդուրժողականության դեպքերին անդրադարձել են հիմնականում այնքանով, ինչքանով դա կապ է ունեցել Սահմանադրական փոփոխությունների դիսկուրսի հետ:

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆԸ

Այսպիսով, այս կայքը նույնպես կենտրոնացում ունի խնդրո առարկա թեմայի վրա, սակայն դա իրականացնում է առավելապես լուսաբանման, թեմայի շուրջ հանրային իրազեկվածության բարձրացման տեսանկյունից՝ խուսափելով սեփական հստակ դիրքորոշման ցուցադրումից: Երբ թեման ընդհանուր առմամբ լուսանցքային է մեդիադաշտի ուշադրության տեսանկյունից՝ այդ կենտրոնացումն արդեն իսկ կարող է դիտարկվել իբրև հանդուրժողական դիրքորոշում: Հանդուրժողական դիրքորոշման մասին է խոսում նաև վերնագրերում տեղ գտած մեջբերումները, որոնք քննադատական խոսք են պարունակում իրավապաշտպանների, ցույցի մասնակիցների հանդեպ բռնության դեպքերի, բերման ենթարկելու մասին: Ուսումնասիրված այլ լրատվամիջոցներից Epress.am կայքի կողմից թեմատիկ իրադարձային լուսաբանումը առանձնանում է նաև նրանով, որ լրատվական առիթ են հանդիսանում ոչ միայն հասարակական լայն հնչեղություն ձեռք բերած տեղեկատվական առիթները, այլև իրավունքներին վերաբերող դաշտում տեղի ունեցած «աննշան» իրադարձությունները:

### Iravunk.com

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Պատկերը բացարձակ այլ է «Իրավունք» թերթի պարագայում: Այստեղ, իհարկե, ապրիլ ամսին կրկին նկատվում է թեմատիկ կենտրոնացում Հիմնադիր Խորհրդարանի «100-ամյակն առանց ռեժիմի» շուրջ կատարվող իրադարձությունների լուսաբանման վրա, սակայն ի տարբերություն այլ լրատվական կայքերի,

այստեղ գերակայում է հստակ ընդգծված բացասա-կան դիրքորոշում, անհանդուրժող վերաբերմունք Հիս անդամների հանդեպ, որը դրսևորվում է առատ պիտակավորումներով (ինչպես օրինակ՝ «Ժիրայրասեֆիյանականներ»): Պետք է նկատել մի կարևոր հանգամանք ևս. «Իրավունք» թերթում պակաս տեղ չեն գրավում թեմայի շուրջ մեկնաբանողական հոդվածները, սակայն այն տարբերությամբ, որ ներկայացված են միայն այն դիրքորոշումները, որոնցում կա հստակ արտահայտված անհանդուրժողականություն տվյալ շարժման հանդեպ: Մասնավորապես, լուսաբանվել են ՀՀԿ խմբակցության անդամների անհանդուրժող դիրքորոշումները, այդ թվում, օրինակ, Վահրամ Բաղդասարյանի, ով հետևյալ կերպ էր անվանել Հիս անդամներին՝ «բաղաբական գործիչ հորջորջող մի խումբ արկածախնդիրներ»:

Սակայն բացի իշխանական թևի ներկայացուցիչներից, «Իրավունք» թերթը նաև հարցազրույցներ է ներկայացրել այնպիսի կուսակցությունների ներկայացուցիչների հետ, որոնց անվանումը դժվար թե ծանոթ լինի հանրությանը (օրինակ՝ «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն) և որոնք ևս ունեն հստակ ընդգծված անհանդուրժող վերաբերմունք վերոնշյալ անձանց հանդեպ: Սա ևս թույլ է տալիս պնդել, որ մեկնաբանողների առերևույթ բազմազանության միջոցով թերթը փորձում է ամրագրել բացահայտ անհանդուրժողականությունը՝ որպես միակ տեսանկյուն: Բացի բաղաբական իրադարձությունների մեկնաբանումից, «Իրավունք»-ը նաև հետևողականորեն լուսաբանում է ԼԳԲՏ համայնքին առնչվող իրադարձությունները՝ դրանք ներկայացնելով միանգամայն բացա-սական երանգների ներքո՝ չխորշելով վերջիններիս և նրանց պաշտպանների հանդեպ բռնության բացահայտ արդարացումից: Այս պարագայում ևս կա և՛ մամուլի ընդգծված անհանդուրժող վերաբերմունք, և՛ ընտրողական վերաբերմունք թեմայի շուրջ արձագանքների լուսաբանման առումով: Փաստորեն, լուսաբանվում են բացառապես անհանդուրժողական խոսք արտահայտող դիրքորոշումները:

Ի տարբերություն ընտրանքում ընդգրկված մյուս լրատվա-միջոցների, «Իրավունք» թերթը մայիս ամսվա ընթացքում գրեթե չի անդրադարձել Հիս-ի «100-ամյակն առանց ռեժիմի» շարժմանը՝ սահմանափակվելով ընդամենը 2 անհանդուրժող, քննադատական բնույթի հոդվածներով: Փոխարենը հոդվածների մեծամասնության թիրախ դարձել են ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչները ու նրանց իրավունքները պաշտպանող մի շարք անձինք և կազմակերպություններ: Մայիս ամսվա հոդվածներում այս տեսանկյունից առանձնանում են

մեջբերումները ԱԺ ԲՀԿ խմբակցության ղեկավար, ԵսեսԿում խորհրդարանական պատվիրակության անդամ Նաիրա Չոհրաբյանի խոսքից.

*«ԼԳԲՏ համայնքին պատկանող անձիք բժշկությանը թերևս անձանոթ քաղցկեղային մի հիվանդության կրողներ են, ովքեր իրենց «մետաստազները կարող են տարածել» հանրության շրջանում»:*

Թերթի հոդվածներում ընդհանուր պատկերը ավելի ցայտուն կերպով կարող ենք տեսնել «Իրավունք» թերթի խմբագրական հոդվածներում օգտագործված արտահայտությունների հետևյալ ծաղկաբաղով.

*«կոնցիտայի վկաներ, չոլի կոնցիտա, գենդերային ակտիվիստներ, գույզգույններ, Արցախի տեղական սաքունց, գենդերային պղծություն, այլասերված երևույթներ»:*

Այս իմաստով կարելի է եզրակացնել, որ թերթն առանձնացրել է թիրախներ կամ Նույնիսկ թշնամու կերպարներ, որոնք գտնվում են մշտական լուսաբանման ներքո: «Իրավունքի» ակնհայտ անհանդուրժողական վերաբերմունքն այս կամ այն իրավապաշտպանի կամ ակտիվիստի հանդեպ արտացոլվում է նաև վերնագրերում<sup>4</sup>:

Հունիս ամսին «Իրավունք»-ի հոդվածները մեծամասնությունը կրկին վերաբերում է ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչներին և նրանց պաշտպաններին Նույն մոտեցումներով: Սա միակ լրատվամիջոցն է, որ ընդամենը մեկ-երկու հոդված է տպագրել Բաղրամյանի դեպքերի վերաբերյալ: Դրանք, սակայն, վերլուծական բնույթի են, ի տարբերություն շատ լրատվամիջոցների, որոնք առհասարակ դիրքորոշում չեն արտահայտում: «Իրավունք»-ը իրադարձությունների հիմքում տեսնում է արևմտյան ուժերի.

*«Այդ ուժի (ոստիկանության կողմից) և վճռականության ցուցադրման հասցեատերերը միանգամայն դրսի մարդիկ են, ովքեր Մայրանի ախորժակ են պահել»:*

Այս Նույն պատկերը նաև շարունակում է երևալ հուլիս ամսին՝ թիրախավորելով ՀԿ սեկտորի ներկայացուցիչներին, որոնք զբաղվում են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ, Բաղրամյանի նստացույցի մասնակիցներին, շարժումը աջակցող ընդդիմադիր քաղաքական գործիչներին: Հիմնականում վերոնշյալ խմբերի ներկայացուցիչների խոսքը ներկայացվում է բացահայտ ծաղրանքի, հեգնանքի և խոսքը, գործը, աշխատանքը արատավորող մի շարք այլ հնարքների միջոցով

<sup>4</sup> \*Ֆեմինիստներն ուզում են հարամել՝ ապրիլի 24-ը, \*Լյուվիկ Չոհրաբյանի ողբը և ակտիվիստների «կայֆերը», \*Ի՛նչ է իրենից ներկայացնում «Նոր Հայաստան» կոչված հակահայկական կառույցը, \*«Բա Կոզևիչի՞ն», կամ «Ոչ»-ի ճամբարի անիմաստ տվյալանքները:

(«գենդերի ու ֆեմինիզմի գծով աշխուժակություն անող ԶԿ-ներ»):

Օգոստոս և սեպտեմբեր ամիսներին հետազոտության թեմայի շուրջ հոդվածները գրեթե բացակայում են: Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների հիմնական թեման այս լրատվականում ևս Սահմանադրական փոփոխությունների նախագիծն էր: Ինչպես միշտ, այս պարագայում ևս լրատվականի խմբագրականը գերծ չի մնացել «Ոչ»-ի ճակատի վերաբերյալ ծաղրանքով, հեգնանքով, քննադատական դատողություններով լի հոդվածներից, որոնցում հիմնական շեշտը դրվում է «Ոչ»-ի ճակատ կազմող մի շարք բաղաբական ուժերի/ներկայացուցիչների բաղաբական անցյալին անդրադառնալու և այս կամ այն «անհաջողությունները» վերհիշելու վրա՝ դրանով իսկ արժեզրկելով ընդհանուր առմամբ պայթարի գործընթացը:

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՈՓՈՒԹՅՈՒՆ

«Իրավունք»-ը ուսումնասիրված լրատվամիջոցների շարքում իսկապես աչքի է ընկնում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ հստակ և բացահայտ դրսևորվող վերաբերմունքով, ինչը առիթ է դառնում նույնիսկ իրադարձային շղթայից շեղվելուն և կոնկրետ թեմայի լուսաբանմանը՝ ի տարբերություն մյուս լրատվամիջոցների, որոնք շատ ավելի հստակ իրադարձային լուսաբանում են իրականացնում: Մինևույն ժամանակ այս հստակ ուղղվածությունը խնդրո առարկա թեմայի լուսաբանմանը նաև հստակ բացասական ու անհանդուրժողական է, ինչը նաև հաշվետվության սկզբում քննարկված դատական նախադեպի արդյունքում ընդլայնման միտում ունի:

## Lragir.am

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Մշտադիտարկման ենթարկված հաջորդ լրատվական կայքը Lragir.am-ն է, որը թեմայի շրջանակներում ապրիլին անդրադարձել է գրեթե միայն Հիմնադիր Խորհրդարանի անդամների շուրջ իրադարձությունների զարգացմանն ու որոշ չափով նաև դրանց մեկնաբանմանը այս կամ այն հանրային անձանց կողմից (բաղաբական գործիչներ, իրավապաշտպաններ, փաստաբաններ), ինչպես նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների արձագանքին դրա

շուրջ, նաև հետևողականորեն ներկայացնում է իրավիճակը ընդհուպ մինչև ձերբակալված անձանց պահման վայրերի մասին տեղեկատվության տրամադրում:

Մայիս ամսին ևս թեմատիկ ուղղվածությունը պահպանվել է, և լրատվամիջոցը ներկայացնում է այն բոլոր իրադարձությունները (հանրահավաք, երթեր, հայտարարություններ, մամուլի ասուլիսներ), որոնք վերաբերում են Հիմնադիր Խորհրդարանին: Նաև ներկայացված է այս ամենի մեկնաբանությունը իրավապաշտպանների տեսանկյունից սեփական հարցազրույցների արդյունքում:

Հունիս և հուլիս ամիսներին լուսաբանված հոդվածները նույնպես մեծամասամբ ուղղված են Բաղրամյանի դեպքերին: Բացի օպերատիվ-տեղեկատվական հոդվածներից, առկա են նաև մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների արված հայտարարություններ, կոչեր և այլն: Սա այն քիչ հանդիպող դեպքերից է, երբ լրատվամիջոցը չի խուսափել սեփական դիրքորոշումն արտահայտել: Իհարկե դրանք հոդվածների համեմատաբար ավելի քիչ մասն են կազմում, այդուհանդերձ արտահայտված դիրքորոշումը դրական է թիրախային խմբերի նկատմամբ:

Օգոստոս ամսին հիմնական շեշտադրումը թեմայի շրջանակներում 21-ի ակցիայի ժամանակ տարեց մարդուն ոստիկանի կողմից հասցված ապտակի դեպքն է, ինչի շուրջ լրատվամիջոցում առկա են դիրքորոշում պարունակող հոդվածները: Հիմնականում նման բռնության դեպքերի հանդեպ վերաբերմունքը արտահայտվում է նաև վերնագրերի միջոցով (*«Ոստիկանի պահվածքն անընդունելի է և խայտառակություն»*): Նկատվում է քննադատական խոսք՝ ուղղված ոստիկանական բռնի գործողություններին, և չեզոք, որոշ դեպքերում նաև դրական վերաբերմունք հենց իրավապաշտպանների, ակտիվիստների հանդեպ:

Սեպտեմբեր ամսին պատկերը գրեթե նույնն է. լուսաբանվել են բոլոր իրադարձային դեպքերը՝ հավաքների, ակցիաների ընթացքում ոստիկանական բռնությունների, Շահեն Հարությունյանի հանդեպ բռնության, ազատամարտիկին ծեծի ենթարկելու դեպքերը:

Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին պատկերը փոխվում է, ինչպես և ամբողջ մեդիադաշտում: Չգալի կրճատվել են ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ հոդվածները: Եղած հոդվածներն էլ հիմնականում Սահմանադրական փոփոխությունների դիսկուրսի մաս են կազմում և ունեն միայն ինֆորմատիվ բնույթ: Փոքր անդրադարձ կա նաև ընդհանուր առմամբ իրավապաշտպանների հանդեպ հետապնդումներին,

որի մասին խոսող ակտորները օմբուդսման Կարեն Անդրեասյանն է և առանձին դեպքում ՓԻՆԶ Արմենիայի ներկայացուցիչները, ում հանդիպել էր ԱՄՆ դեսպանը իրենց նկատմամբ սպառնալիքների, բռնության կոչերի հարցով:

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՎՓՈՒԹՅՈՒՆԸ

Այս լրատվամիջոցը, չնայած թեմատիկ տեսանկյունից նույնպես իրականացնում է գրեթե միայն հանրային հնչեղությունն ստացած իրադարձությունների լուսաբանում: Ի տարբերություն մյուս նմանատիպ լրատվամիջոցների, այդ իրադարձությունները նույնպես ընտրողաբար է լուսաբանում: Կարելի է ենթադրել, որ նշված իրադարձությունների ընտրությունը իրականացվում է առավել գլոբալ խմբագրական ուղեգծի համատեքստում, որտեղ նշված իրադարձությունը հանդիսանում է միջոց՝ առավել լայն դիրքորոշման կամ տեսակետի արտահայտման համար: Այս առումով հատկանշական է, որ լրատվամիջոցը իրեն չի դիրքավորում որպես անընդհատ թարմացվող և օպերատիվ լուսաբանող մեդիա, այլ փորձում է այդ լրատվամիջոցների համեմատ տարբերվող մի կերպար ստեղծել, ըստ որի կարևոր է ոչ թե քանակական բաղադրիչը՝ տրվող նյութերի քանակը, այլ դրանց բազմազանությունն ու այսպես կոչված բացառիկությունը, ինչը փորձ է արվում ապահովել վերլուծական-խմբագրական հոդվածների միջոցով: Սակայն այս տեսանկյունից էլ իրավապաշտպանների և ակտիվիստների գործունեության լուսաբանումը կամ դրանց հանդեպ դիրքորոշումը լրատվամիջոցի համար, համաձայն մոնիտորինգի արդյունքների, նշանակալի թեմա չէ, այլ միայն միջոց՝ սեփական դիրքավորման առանցքային բաղադրիչների ամրապնդման համար:

## News.am

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

News.am լրատվական կայքում ամենաշատ լուսաբանվող թեմաներից մեկը ապրիլ ամսին Հիմնադիր խորհրդարանի անդամների ձերբակալությունն էր. բազմակարծությունն ու վերլուծական հոդվածները գրեթե բացակայում են: Ապրիլ ամսվա ընթացքում ՀԽ անդամների ձերբակալման շուրջ լուսաբանվող հոդվածների մեծամասնության վերջում կնկատենք, որ որպես համատեքստ մեջբերվող տեքստը հիմնված է միայն ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված

մեկնաբանության վրա: Դրանում նշվում է, որ

*«ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ քննչական կոմիտեի համատեղ ձեռնարկած միջոցառումների արդյունքում կանխվել է 2015թ. ապրիլի 24-ին հրապարակային միջոցառումների անցկացման վայրերում զանգվածային անկարգությունների կազմակերպումը»:*

Այնինչ, գրեթե բոլոր լրատվական կայքերը, որոնք անդրադարձել են տվյալ թեմային՝ որպես հրատապ, իրադարձային նյութի՝ ներկայացրել են մի շարք մեկնաբանություններ, այդ թվում այնպիսիք, որոնցում ձերբակալումները դիտարկում են որպես իշխանական մարմինների կողմից քաղաքական հայացքների համար հետապնդում: Մայիսին հիմնական շեշտադրումը թեմայի շրջանակներում Հիմնադիր հորհրդարանի անդամների ազատ արձակման, դրան ուղղված մի շարք երթերի լուսաբանման վրա է: Օպերատիվ կերպով ներկայացվել են ոչ միայն ելույթի խոսքերը, հայտարարությունները և այլն, այլև երթերի ընթացքում անհանդուրժողականության դրսևորումները Հիմնադիր հորհրդարանի երիտասարդ անդամների ոստիկանական բաժանմունք տանելուց մինչև Ազատության հրապարակում հանրահավաքի անցկացման համար Օպերայից հոսանքի տրամադրման հրաժարում: Կայքը նաև անդրադարձել է Գայանե Առուստամյանին բերման ենթարկելուն, Շանթ Հարությունյանի համախոհ Սևակ Մնացականյանի ազատ արձակմանը և այլն: Հունիս ամսին բոլոր լրատվական կայքերի հետ համեմատած՝ հոդվածների քանակով առաջին տեղում է News.am-ը: Լրատվամիջոցը հետևողականորեն լուսաբանել է բոլոր տեսակի իրադարձությունները՝ կապված Բաղդամյանի հետ: Զիչ չեն մեկնաբանողական հոդվածները այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցիչների կողմից: Լուսաբանվել են նաև մի շարք տեղական և միջազգային կառույցների դիմումները, կոչերը, ընդհանուր առմամբ բոլոր տեսակի արձագանքները թեմայի շուրջ՝ և՛ հանդուրժողական, և՛ անհանդուրժող: News.am-ը հուլիսին ևս շարունակել է օպերատիվ լուսաբանել էլեկտրաէներգիայի թանկացման դեմ ուղղված ակցիաների, հավաքների ժամանակ տեղի ունեցած անհանդուրժողականության դեպքերը:

Սեպտեմբեր ամսին թեմայի շրջանակներում լուսաբանվել են «Ուոքի Հայաստան», «Ոչ թալանին» նախաձեռնությունների ակցիաների ընթացքում պատահած անհանդուրժողականության դեպքերը, սակայն հոդվածների ամենամեծ թիվը վերաբերում է սեպտեմբերի 21-ին «Հայազն» կուսակցության կազմակերպած «Ինքիշխանության երթից» հետո ազատամարտիկ Սմբատ Հակոբյանին ծեծի ենթարկելու դեպքի մասին լուրերին: Լրատվամիջոցը որևէ դիրքորոշում

չի արտահայտում բացահայտ անհանդուրժողականության վերաբերյալ: Լուրերը հիմնականում օպերատիվ բնույթ ունեն: Կան հոդվածներ, որտեղ ակտորները (իշխանական թևից) խոսում են բռնության դեպքի՝ քաղաքական համատեքստից դուրս լինելու մասին, ինչը պետք է նշել, որ գրեթե ոչ մի այլ մեդիա չի լուսաբանել:

Յոկտեմբեր, Նոյեմբեր ամիսներին ուսումնասիրվող թեմատիկայում հոդվածները զգալի նվազում են՝ պայմանավորված Սահմանադրական փոփոխությունների դիսկուրսի առաջին պլան գալով: Այստեղ բացարձակ գերակայություն ունի թեմայի քաղաքական ուղերձը, և չնայած հատուկենտ հոդվածներին, որտեղ խոսվում է «Ոչ»-ի ճակատի ակցիաների ժամանակ ոստիկանների և ցուցարարների միջև բախումների, Բաղրամյանի ցուցարարների դեմ քրեական գործի, Օմբուդսմենի հայտարարությունների մասին, դրանք չեն կարող նշանակալի համարվել, քանի որ քանակական ցուցանիշով նման հոդվածները կազմում են ամբողջ լրահոսի մոտ 1/100-րդ մասը:

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՈՓՈՒԹՅՈՒՆ

Այս լրատվամիջոցի պարագայում շեշտը հնարավորինս փոքր ժամանակային միջակայքերում հասարակական հնչեղություն ունեցող թեմայի վերաբերյալ Նյութերի հրապարակման վրա է, որտեղ կարևորվում է Նյութի առկայությունն ինքնին՝ երկրորդելով դրա որակը, ասելիքն ու բովանդակությունը: Ուստի լուրերը ներկայացվում են մաքսիմալ օպերատիվությամբ ու գրեթե մեկ կամ մի քանի նախադասությամբ: Լրատվամիջոցում Նյութը չի վերջանում օպերատիվ լուրի հաղորդմամբ. դրանց մեծամասնությունում վերջում տրամադրվում է թեմատիկ հիշեցում: Քանակական այդ մոտեցումը հանգեցնում է որոշակի մտքերի անընդհատ տիրաժավորմանը, ինչը նպատակադրված կամ չնպատակադրված ձևով արդեն իսկ ձևակերպում է դիրքորոշումը՝ հանրային ընկալման մակարդակում:

### Tert.am

#### ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Tert.am-ի ապրիլյան հոդվածներում մեզ հետաքրքրող թեմայի շրջանակներում ավելի շատ ուշադրություն է դարձվել այդ ամիս ՀԻ-ի շուրջ կատարված իրադարձություններին, (ան)հան-



դուրժողականության դրսևորումներին վերջինիս անդամների հանդեպ, մասնավորապես ՅԽ անդամների ձերբակալությունից հետո նրանց համար նստացույցեր, բողոքի ակցիաներ անցկացնողների ելույթներին: Կան նաև հողվածներ, որոնցում արտահայտվում է իշխանական թևի դիրքորոշումը վերջիններիս ձերբակալումների հանդեպ, օր.՝ նման վերնագրով՝

*«Ես դեմ չեմ, որ նման մարդկանց մեկուսացնեն հանրությունից.  
Վ. Բաղդասարյանը՝ Սեֆիյանի և ընկերների ձերբակալության մասին»:*

Կարելի է եզրակացնել, որ անուղղակի կերպով լրատվամիջոցի դիրքորոշումը արտահայտվում է վերնագրերի ընտրողական մեջբերումներում: Այս պարագայում ևս բացակայում են խմբագրական հողվածները՝ ուղղված այս կամ այն իրադարձության մեկնաբանմանը տվյալ թեմայի շրջանակներում:

Նույն պատկերը չէ, սակայն, մայիս ամսին. լրատվամիջոցը սահմանափակվել է մի քանի նկարագրողական հողվածներով, որոնք խոսում են Ժիրայր Սեֆիյանի և Նրա համախոհների ազատ արձակման մասին:

Յուրիս ամսին թեմայի շրջանակներում հողվածներն այդքան էլ շատ չեն: Առավելապես լուսաբանվել են ամսվա երկրորդ կեսին Բաղդամյանի նստացույցի հետ կապված իրադարձությունները, որոնց մասին հողվածները քիչ չեն եղել նաև հուլիս ամսին: Յիմնականում մի քանի օպերատիվ նորությունն հաղորդող հողվածների կողքին կան նաև մեկնաբանողական բնույթի հողվածները: Ներկայացված են և՛ իշխանական թևի, և՛ ընդդիմադիրների, և՛ մի երրորդ խմբի մեկնաբանողական դիրքորոշումները պարունակող հողվածները, որոնց հիմնական կոչը բռնություններից զերծ մնալն է ոստիկանների և հավաքի մասնակիցների միջև: Լրատվամիջոցը ներկայացնում է նաև մի շարք այլ լրատվական կայքերի հողվածներ, որոնցում կա և՛ հանդուրժողական, և՛ անհանդուրժողական խոսքեր նստացույցի մասնակիցների մասին:

Օգոստոս ամսին մեզ հետաքրքրող թեմատիկայում հողվածները սահմանափակվել են կրկին իրադարձային, հնչեղությունն ստացած դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով: Մասնավորապես հողվածները հիմնականում վերաբերվում են օգոստոսի 22-ին Յանրապետության իրապարակում տեղի ունեցած ցույցի ժամանակ ոստիկանության աշխատակցի կողմից տարեց տղամարդու հանդեպ բռնության դեպքին: Չկա ոչ մի քննադատական մեկնաբանություն՝ չնայած մեդիադաշտն այդ շրջանում ողողված էր քննադատական կարծիքներ պարունակող

հողվածներով, իսկ այստեղ կա միայն տեղեկություն, որ ոստիկանության աշխատակիցը ներողություն է խնդրում, ինչպես նաև այս դեպքի առնչությամբ հարուցված գործի ընթացքի մասին որոշ հողվածներ:

Սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին՝ պայմանավորված Սահմանադրական դիսկուրսի զարգացումով, հետազոտության թեմային առնչվող հողվածները եղել են այնքանով, ինչքանով որ կապ են ունեցել Սահմանադրական փոփոխությունների հետ: Մասնավորապես լուսաբանվել են «Ոչ»-ի ճակատի կազմակերպած ակցիաների, հավաքների ժամանակ տեղի ունեցած անհանդուրժողականության դեպքերը ոստիկանության կողմից («Ոչ»-ի ճակատին դահլիճների չտրամադրում, ակցիայի ժամանակ 21 ակտիվիստի ձերբակալություն):

#### ԹԵՄԱՏԻԿ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԶՎՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ հարկ է նշել, որ թեմայի լուսաբանումը լրատվամիջոցի ընդհանուր ռազմավարության շրջանակներում է՝ գերծ մտալ սեփական մեկնաբանություններից ու հեղինակ ունեցող հողվածներից ընդհանրապես: Ընտրողական վերաբերմունքը վերնագրերի և մեջբերվող խոսքի ու դրա հեղինակների ներկայացման նկատմամբ այն անուղղակի միջոցներն են, որոնցով այդ դիրքորոշումը դրսևորվում և տարածվում է: Հատկապես ակտիվ է օգտագործվում հանրային դեմքերի հընչեցրած կարծիքների շրջանառումը՝ նրանց հեղինակությունն օգտագործելով սեփական մոտեցման տարածման և հանրային կարծիքի ուղղորդման նպատակով: Մինևույն ժամանակ թեմայի լուսաբանման կարևոր առանձնահատկություն է զգուշությունը, որը դրսևորվում է օպերատիվ ու անընդհատ թարմացվող տեղեկատվություն տվող լրատվամիջոցի դիրքավորման պարագայում թեմատիկ հողվածների անհամեմատ քիչ համամասնության՝ օպերատիվ լրատվության ընդհանուր ծավալի մեջ: Այլ կերպ ասած՝ լուսաբանվում է այն, ինչն ուղղակի չի կարող չլուսաբանվել տեղեկատվական հնչեղ առիթ լինելու պատճառով: Մնացած բոլոր այլ դեպքերում գերադասվում է պահպանել լռություն:

## Գլուխ 6

### Փորձագիտական դիտարկումներ իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիադաշտի դիրքորոշման առնչությամբ

Ակտիվիստների և իրավապաշտպանների հանդեպ մեդիա հանդուրժողականության պատկերն ամբողջացնելու համար իրականացվել են նաև փորձագիտական հարցազրույցներ՝ մեդիափորձագետների և իրավապաշտպանի հետ՝ հասկանալու իրավիճակի մեկնաբանությունը վերջիններիս կողմից:

Ինչպես երևում է ինդեքսում, անհանդուրժողականության աստիճանով բացարձակ գերակա դիրք է զբաղեցրել «Իրավունք»-ը: Սա նաև հաստատվում է փորձագետների տեսանկյուններում՝ ներկայացնելով մեդիադաշտում լրատվամիջոցին որպես «անհանդուրժողականության չեմպիոն» (մեդիափորձագետ): Իրավապաշտպանի դիրքորոշմամբ այս լրատվամիջոցի զբաղեցրած դիրքը պայմանավորված է նաև վերջինիս անկեղծությամբ: Թերթն ունի հստակ խմբագրական անհանդուրժող դիրքորոշում, որն արտահայտվում է հոդվածներում: Ի համեմատ սրա՝ «Առավոտ»-ը փորձագետների կարծիքով աչքի չի ընկնում թեմայի շուրջ խմբագրական հսկողությամբ: Այսինքն՝ «Առավոտ»-ի դիրքն ինդեքսում մեդիափորձագետը չի բացատրում խմբագրական քաղաքականությամբ, այլ կապում է թեմայի հանդեպ վերահսկողության բացակայությամբ՝ համարելով, որ այն կրում է պատահական բնույթ: Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ մյուս լրատվամիջոցները գրեթե միևնույն դիրքավորումն ունեն թեմայի շուրջ: Սա մեդիափորձագետի կողմից դիտարկվում է որպես դրական միտում, «ինչը խոսում է մեդիադաշտում այս խնդիրների նկատմամբ ընդունված ընդհանուր ստանդարտների, խաղի կանոնների ու կայացածության մասին» (մեդիափորձագետ):

Իրավապաշտպանը գտնում է, որ դատելով ինդեքսի արդյունքներից *«կարող ենք ասել՝ մեդիան իսկապես անկախ չէ, որովհետև իրենց զբաղեցրած տեղերը չեն համապատասխանում իրենց իրական էությանը»* (իրավապաշտպան):

Իրավապաշտպանի կողմից կարևորվում են խմբագիրների անձնական դիրքորոշումները, քաղաքական այս կամ այն թևի հետ կապերը, որոնք ուղղակիորեն ազդում են լրատվամիջոցի դիրքավորման վրա՝ չնայած դրանց հիմնականում լատենտ բնույթին: Լրատվամիջոցի պատկերը զգալի կարող է փոխվել խմբագրի փոփոխմամբ: Ոմանք ավելի ազատ են թողնում լրագրողներին և ոմանք՝ ոչ այդքան: Մեդիափորձագետը ևս նշում է.

*«Իրավապաշտպանների և ակտիվիստների այս կամ այն գործողությունների հանդեպ մեդիայի ռեակցիան ուղիղ համեմատական է նրանց ակտիվությանը, և դրանից շեղումները կարող են պայմանավորվել խմբագրի կողմից երևույթի հանդեպ սուբյեկտիվ մոտեցմամբ»:*

Խոսելով Հայաստանում մեդիայի գործունեության մասին՝ իրավապաշտպանի հավաստմամբ խմբագրական քաղաքականության մեջ որոշիչ գործոն է այս կամ այն քաղաքական ուժի հետ կապ ունենալը կամ որոշ դեպքերում անմիջապես պատկանելությունը: Սրանով պայմանավորված ձևավորվում է նաև իրավապաշտպանների, ակտիվիստների հանդեպ մեդիա անհանդուրժողականությունը: Այս մասին է նաև նշում մեդիափորձագետը.

*Ցավոք սրտի, շատ է քաղաքական ազդեցությունը, քիչ՝ բիզնես գործոնը, ու սա վատ է, որովհետև մեր հասարակությունը հարուստ չէ, բիզնեսի հնարավորությունները գնալով նեղանում են, ու մեր հասարակությունը չի կարող պահել մեդիաձեռնարկություններին, ունենալ նման անկախ կառույցներ, դրա համար էլ հիմնական պատվիրատուն մնում է քաղաքականությունը, որն էլ ունենում է համարժեք հետևանքներ»:*

Հատկանշական է իրավապաշտպանի այն դիրքորոշումը, որ չի կարելի լինել անհանդուրժող, օրինակ այս կամ այն քաղաքական ուժի հանդեպ, բայց՝ հանդուրժող իրավապաշտպանի հանդեպ: Իրավապաշտպանի կարծիքով խնդրահարույց է ներկայացնել մեդիաանդուրժողականությունը միայն իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ և խոսել տվյալ լրատվամիջոցի ընդհանուր հանդուրժողականության աստիճանի մասին, օրինակ, եթե Tert.am-ը ինդեքսում ունի հանդուրժողականության ամենաբարձր ցուցանիշը, մենք չենք կարող ասել, որ վերջինս հանդուրժող լրատվամիջոց է: Եթե

լրատվամիջոցն իրեն դիրքավորում է որպես հանդուրժող, պետք է հանդուրժող լինի բոլորի նկատմամբ՝ առանց բացառության: Բայց այստեղ բախվում ենք լրատվամիջոցի անազատության խնդրին ևս, որը կարող է խոչընդոտել լրագրողների (ան)հանդուրժող դիրքորոշումների արտահայտմանը:

*«լրատվամիջոցին կարող են ասել՝ դու կլինես անկախ, ինքն էլ ասում է՝ լավ, ես կլինեմ անկախ»:*

Իրավապաշտպանի կարծիքով անհրաժեշտ է դիտարկել իրավապաշտպաններին և ակտիվիստներին առանձին խմբերով, և նույնքան կարևոր է նաև ակտիվիստների տարանջատումը քաղաքականի և քաղաքացիականի:

*«Եթե քաղաքացիական ակտիվիստը կարող է գնալ կանգնել Բաղրամյանում բողոքի ակցիա անող զոհված զինծառայողների մայրերի կողքին և միասալ այլ ակցիաների, ապա քաղաքական ակտիվիստների միակ թիրախն իշխանությունն է»:*

Մեդիափորձագետի հավաստմամբ մեդիաընկերությունների կողմից թեմային քիչ կամ շատ անդադարձը, հետևողական կամ ոչ այնքան հետևողական լուսաբանումը հիմնականում պայմանավորված է մեդիա օրակարգի ունենալ/չունենալու և դրանում թեմայի դիրքավորման հետ: Ըստ այդմ.

*«Tert.am-ը հատուկ խմբագրական քաղաքականություն չունի՝ իրավապաշտպանների հանդեպ, Epress.am-ը ամենահանդուրժողն է, հատուկ հանդուրժող լինելու ու հանդուրժողատարածման օրակարգ ունի, Lragir.am-ը երբեմն իրավապաշտպանների խոսափող է, Tin.am-ը հստակ օրակարգով կառավարելի մեդիա է, Նայած՝ այդ պահին ինչպես պետք կլինի ներկայացնել թեման (ցանկացած թեմա), A1plus.am-ը հատուկ խմբագրական օրակարգ չունի, News.am-ը ամենամեծ լսարանով ինտերնետային մեդիան է, իհարկե ունի պատվիրատուներ, սակայն իրավապաշտպանների հարցում հատուկ անհանդուրժող չէ, «Հայկական ժամանակ»-ն այս պահին գրեթե կուսակցական մեդիա է՝ հստակ դիրքորոշմամբ, Azatutyun.am-ն ունի հստակ խմբագրական քաղաքականություն, լսարանի տեսակետից լավագույնն է աշխատում ցանկացած հարցում՝ նաև իրավապաշտպանների, «Առավոտ»-ը հետևողական չէ, խմբագրական հսկողությունը թույլ է, անհեթեթե անհանդուրժող կարող է լինել, «Իրավունք»-ը հատուկ խմբագրականով անհանդուրժող մեդիա է» (մեդիափորձագետ):*

Խոսելով իրավապաշտպանական թեմաների հանդեպ առցանց մեդիայի և հեռուստատեսային դաշտի ունեցած վերաբերմունքի ու լուսաբանման առանձնահատկություններից՝ փորձագետ-

ները փաստում են, որ դաշտն առավելապես լուսաբանվում է առցանց մեդիայի կողմից և գրեթե լսելի չէ հեռուստատեսային մեդիայում.

*«Առցանց մեդիայի արագ արձագանքման ռեսուրսները շատ ավելի մեծ են ու ավելի արագ են լուսաբանում: Նրանք ավելի ազատ են, քան հեռուստադաշտը. եթե հեռուստաեթերը լրատվությունը 25 րոպեում սահմանափակում է, ապա նրանք 24 ժամ պիտի նյութ ապահովեն, ուստի շատ ավելի օպերատիվ ու արագ, բազմաբովանդակ լուսաբանեն» (մեդիափորձագետ):*

Իրավապաշտպանի հաղորդմամբ հեռուստատեսային հաղորդումներից մեկի շրջանակներում մի հանրային գործիչ անդրադարձել էր իրավապաշտպաններին և անձնավորված սպառնալիք հնչեցրել, թե պատրաստ է սպանել իրեն (մեր կողմից հարցված իրավապաշտպանին): Վերջինս փորձել էր արձագանքել և նույն հաղորդաշարի շրջանակներում խոսել այդ մասին, սակայն իրեն պատասխանել էին, որ չեն կարող իրավիճակը ասելով. *«Մեզ արգելված է Ձեզ հյուր կանչել»:* Արդյունքում իրավապաշտպանը իր հանդեպ հեռուստատեսությամբ հնչած սպառնալիքներին պատասխանելու հնարավորություն չի ստացել, ուրեմն լսելի չեն անմիջապես իրավապաշտպանների կամ ակտիվիստների ձայները:

Հայաստանում իրավապաշտպանական և ակտիվիստական գործունեության առավել ակտիվ լուսաբանման համար, ըստ փորձագետների, անհրաժեշտ է առավել ակտիվ համագործակցության ստեղծում մեդիայի և վերոնշյալ խմբերի միջև, ինչպես նաև մեդիագրագիտության բարձրացում և՛ իրավապաշտպանական, և՛ ակտիվիստական թեմաներով, որպեսզի լրագրողների պատկերացումները վերոնշյալ խմբերի մասին լինեն ավելի պարզորոշ ու զրազետ:

## Գլուխ 7

### Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով 2015 թվականի ապրիլ-դեկտեմբեր ամիսների ընթացքում իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիահանդուրժողականության ուսումնասիրության արդյունքները՝ ակնհայտ են դառնում մեդիադաշտի մի քանի միտումներ.

- *Թեմայի լուսաբանումը մեդիադաշտում հիմնականում կրում է իրադարձային բնույթ՝ չհանդիսանալով ուշադրության կայուն թիրախ ուսումնասիրված լրատվամիջոցների մեծամասնության համար, բացառությամբ «Իրավունքի», որն իր հերթին ընդգծված անհանդուրժող կեցվածք ունի: Ասվածով է բացատրվում այն, որ ուսումնասիրվող թեմատիկ հոդվածները տարբեր լրատվամիջոցներում ընդգրկում են նույն տեղեկատվական առիթների լուսաբանումը և աչքի են ընկնում միօրինակությամբ: Ի տարբերություն սրա, «Իրավունքի» պարագայում կա կայուն անհանդուրժող քաղաքականություն թեմայի նկատմամբ, որի համեմատ տեղեկատվական առիթները կրում են երկրորդային բնույթ՝ լուսաբանման առիթ դառնալով շատ ավելի հատվածաբար, քան մյուս լրատվամիջոցներում:*
- *Լրատվամիջոցները խուսափում են որևէ կերպ դիրքորոշում հայտնել իրավապաշտպանական հարցերի վերաբերյալ՝ առաջնորդվելով հիմնականում այլ ակտորների խոսքերի վերապատմման, մեջբերումների, պաշտոնական հայտա-րարությունների գետեղումների և դրանով իսկ «ուրիշի» դիրքորոշման փոխանցմամբ:*
- *Միևնույն ժամանակ լրատվամիջոցի դիրքորոշումը դրսևորվում է մի շարք անուղղակի միջոցներով, ինչպես վեր-նագրերի դերում կոնկրետ դիրքորոշում պարունակող արտահայտությունների տեղադրումը, հրապարակվող նյութերում հիմնականում մեկ տեսակետի փոխանցումը, թեմայի համատեքստի կրկնումն ու դրանով իսկ տիրաժափորումը,*

որոնք, անկախ դրանց նպատակադրված կամ պատահական բնույթից, ստեղծում են կայուն տպավորություն և հասարակական ընկալում կոնկրետ լրատվամիջոցով խնդրո առարկա թեմայի վերաբերյալ լուսաբանում ստանալիս:

- Ուշագրավ է, որ այլ ցուցիչներով անհանդուրժողականության համեմատաբար ավելի փոքր մակարդակ արձանագրելով՝ անհանդուրժողականությունը շատ ավելի բարձր է գնահատվում «լսարանի դիտանկյուն» ցուցիչով: Սա ցույց է տալիս առերևույթ հանդուրժող նյութերի՝ լսարանի վրա իրապես անհանդուրժող կեցվածքի տպավորություն թողնելու և հետևաբար այդ անհանդուրժողականության տարածման հնարավորությունները, ինչն ակտիվորեն օգտագործվում է ուսումնասիրված որոշ լրատվամիջոցների կողմից:
- Ցուցիչներով արձանագրված տարբեր նիշերը ցուցանում են տարբեր լրատվամիջոցների կողմից որդեգրված տարբեր ռազմավարություններ: Օրինակ՝ Aravot.am-ը, News.am-ն ու 1in.am-ը շատ ավելի բարձր անհանդուրժողականություն են գրանցել առաջին ցուցիչով, ինչը հիմնականում արդյունք է վերջիններիս կողմից տարածվող նյութերի բնույթի և դրանցում կարծիքների միակողմանիության դրսևորման:

Ելնելով խնդրո առարկայի վերաբերյալ փորձագետների կողմից արված առաջարկներից, ինչպես նաև հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքներն ու ի հայտ բերված օրինաչափությունները՝ իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ մեդիադաշտի անդրադարձի որակը բարելավելու նկատառումով ընթացիկ հաշվետվությունում ներառում ենք հետևյալ առաջարկությունները.

- Անհրաժեշտ է բարձրացնել մեդիադաշտի և շահառու խմբերի իրազեկվածությունը իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ հանդուրժողականության դաշտում արձանագրված խնդիրների վերաբերյալ՝ կազմակերպելով քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ, որոնք հնարավոր կդարձնեն խնդրի թե՛ իրավական, թե՛ էթիկական, թե՛ պրոֆեսիոնալ կողմերի մանրամասն ներկայացումը՝ հետագա քայլերի ձևակերպմամբ:
- Անհրաժեշտ է խորացնել համագործակցությունը հասարակական կազմակերպությունների և մեդիադաշտի միջև մի բանի ուղղություններով.
  - հասարակական կազմակերպությունները կարող են վեր հանել մեդիադաշտում խնդրո առարկայի թեմայի առնչությամբ տեղ գտած ատելության կոչերը և իրավական գնահատականներ տալ բացահայտված դեպքերին՝ նախադեպի ինստիտուտ ստեղծելով,



- հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել լրագրողների վերապատրաստումներ կամ իրազեկումներ՝ ատելության խոսքի, հանդուրժողականության և խտրականության հարցերի վերաբերյալ՝ բարձրացնելով վերջիններիս մասնագիտական պատրաստվածության մակարդակը:
- Մեդիադաշտում թեմայի լուսաբանման և հանդուրժողականության աստիճանի բարձրացման նպատակով անհրաժեշտ է այս խնդիրների արձարծումն ապահովել նաև լրագրողական մասնագիտության կրթության գործընթացում՝ համապատասխան թեմատիկ քննարկումներ ներառելով մասնագիտական դասընթացների շրջանակներում:
- Անհրաժեշտ է խուսափել պետական խրախուսանքի որևէ ձևի դրսևորումից իրավապաշտպանների և ակտիվիստների հանդեպ անհանդուրժող վերաբերմունք ցուցաբերող լրատվամիջոցների և լրագրողների հանդեպ, ինչը հակառակ դեպքում կարող է անուղղակի կերպով խրախուսել ատելության/մերժողական խոսքի տարածումը մեդիադաշտում:
- Անհրաժեշտ է զարգացնել լրագրողական էթիկայի և որակի վերահսկման ներքին մեխանիզմների գործառնությունը մեդիադաշտում, որոնք հնարավորինս կբացառեն մասնագիտական էթիկայի և որակի տեսանկյունից խնդրահարույց նյութերի տեղակայումը/իրապարակումն ու տարածումը մեդիադաշտում:

## Հավելված

### Սահմանադրական փոփոխությունների ներկայացումը առցանց մեդիայում

#### ՄԵԴԻԱ ՆԿԱՐԱԳԻՐ

Հանրային կարևորություն ունեցող թեմաների քննարկման դեպքում, ինչպիսին Սահմանադրական փոփոխությունների նախագիծն է, լրատվամիջոցների դերը հնարավոր չէ գերազնահատել: Կախված սրանից, թե ինչպես և ում միջոցով են ներկայացվում Սահմանադրական փոփոխությունների շուրջ զարգացող իրադարձությունները, ինչ խնդիրներ են բարձրաձայնվում կամ շեշտադրվում, ինչ համատեքստում է խոսվում նախագծի մասին մեդիայում, ընթերցողի մոտ կարող են ձևավորվել բոլորովին տարբեր կարծիքներ խնդրո առարկայի վերաբերյալ: Սահմանադրական փոփոխությունների գործընթացի համատեքստում էլ ավելի կարևոր է հասկանալ, թե ինչպես են ՉԼՄ-ները իրագործում իրենց աշխատանքի վերջնականատակը՝ հնարավորինս ընդգրկուն, բազմակողմանի տեղեկատվության տրամադրումը լայն հանրությանը:

Հեռուստատեսության՝ այս կամ այն քաղաքական ուժի, վերահսկողության կամ անմիջական հովանավորության տակ գտնվելու պայմաններում, իրականության օբյեկտիվ ներկայացումը խնդրահարույց է: Այս ֆոնին ավելի մեծ կշիռ է ստանում առցանց մամուլը, ինչը ենթադրում է նաև վերջինիս հանդեպ վստահության աստիճանի բարձրացում: Ոլորտում արված տարբեր հետազոտություններ վկայում են, որ մինչ հեռուստատեսության հանդեպ լսարանի վերաբերմունքը քիչ թե շատ հստակեցված է, առցանց մեդիայի դեպքում այդ վերաբերմունքը դեռևս ձևավորման փուլում է: Բացի դրանից, եթե հեռուստատեսությանը դիմելու մոտիվացիան շատ ավելի ընդգծված ժամանցային է, ապա առցանց մամուլի դեպքում շատ ավելի նշանակալի են դառնում հասարակական-քաղաքական կարևոր իրադարձությունների մասին

տեղեկատվության ստացման, այլընտրանքային կարծիքների և տեսակետների ծանոթանալու ակնկալիքները: Ուստի կարևոր է հասկանալ, թե արդյոք առցանց մամուլի ուղիղ կամ միջնորդավորված կապը այս կամ այն ուժի հետ ազդում է տվյալ մեդիայի՝ որպես խոսող ակտոր ներկայանալու վրա: Ցավոք, թեմայի ուսումնասիրությունը ևս հաստատում է այն վարկածը, որ առցանց հարթակում և՛ թեմաների, և՛ համատեքստի, և՛ ակտորների ընտրությունը<sup>1</sup> նույնպես ուղղորդվում է քաղաքական ուժերի հետ հնարավոր կապերից:

#### ՈՎԹԵՐ ԵՆ ԽՈՍՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ու՞մ խոսքն է լրատվամիջոցը դարձնում ավելի լսելի, ու՞մ դիրքորոշումներն են շրջանառվում, ինչի՞ վրա է ուղղորդվում հանրության ուշադրությունը, հատկապես ռի ասպեկտներն են քննարկվում և ի՞նչ համատեքստում: Այս միջոցներով է բացահայտ կամ լատենտ կերպով ստեղծվում որոշակի իրականություն, որը կարող է ուղղորդել մարդկանց դիրքորոշումների ձևավորման հարցում: Այս հարցերը դրդում են ուսումնասիրել լրատվությունը առաջին հերթին հենց ակտորների ընտրության տեսանկյունից:


Սահմանադրական փոփոխությունների գործընթացի ներկայացման համատեքստում կարելի է առանձնացնել հիմնական ակտորների երեք խումբ՝ 1.«Ոչ»-ի ճակատ կազմող Նախաձեռնություններ, ՀԿ-ներ, քաղաքական կուսակցություններ, 2.«Այո»-ի ճակատ կազմող քաղաքական կուսակցություններ, և ցավոք, ոչ բոլոր լրատվամիջոցներում, բայց՝ 3.փորձագետներ՝ իրավաբաններ, փաստաբաններ, էկոլոգներ, սոցիոլոգներ, քաղաքագետներ և այլք:

Ըստ ակտորների բազմազանության առանձնանում է հատկապես «Առավոտ» օրաթերթը, որտեղ հստակ տեղեկատվություն են փոխանցում նշված երեք խմբի ներկայացուցիչներն էլ և թույլ են տալիս ընթերցողին հնարավորինս բազմակողմանի ինֆորմացիա ստանալ թեմայի մասին: Մյուս լրատվամիջոցը, որի մոտ ևս առկա են այս թեմայով փորձագիտական հոդվածներ, News.am-ն է: Այստեղ խնդիրն այն է, որ հոդվածների չափազանց մեծ թվաքանակում դրանք կազմում են շատ փոքր մաս, ուստի դժվար է խոսել

<sup>1</sup> Առցանց լրատվամիջոցների մշտադիտարկումն իրականացվել է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Մշտադիտարկման են ենթարկվել Epress.am, Tert.am, Azatutyun.am, News.am, Lragir.am, 1in.am, A1plus.am և Հայկական ժամանակ, Առավոտ, Իրավունք թերթերի առցանց տարբերակները: Ընտրված 10 առցանց լրատվամիջոցներից առանձնացվել է 1889 հոդված, որոնք վերաբերում են Սահմանադրական փոփոխություններին: Հոդվածները վերլուծվել են որակական մեթոդաբանության շրջանակներում:

Նման ինֆորմացիոն հոդվածների ֆունկցիոնալության մասին: Նախագիծը դրական համատեքստում ներկայացնող ակտորների խոսքը բացարձակ գերակա դիրքում է «Իրավունք» թերթում և Tert.am-ում՝ համեմատաբար ավելի քիչ: Lragir.am-ի պարագայում առաջին հայացքից թվում է, թե այն առանց կողմնակալության հավասարապես ներկայացրել է երկու կողմերի տեսակետներն ու մեկնաբանությունները: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն համատեքստը, որում խոսում են «Ոչ»-ի ճակատի ներկայացուցիչները. ճակատում առկա խնդիրներ, հակասություններ, դժվարություններ: Այս համեմատության մեջ, իհարկե, առավել ցայտուն ընդգծվում է «Այո»-ի «հաջողակ» կերպարը:

#### Պատկեր 4



Մոնիթորինգի ընտրանքում ներառված լրատվամիջոցներում առկա ընդհանուր համատեքստից՝ կարելի է առանձնացնել մեդիաների երկու խումբ (տես Աղյուսակ 4): Առաջին խմբում այն մեդիամիավորներն են, որոնք թվում է, թե ներկայացրել են թեման՝ տեղեկատվություն տրամադրելով բոլոր հնարավոր կողմերի մեկնաբանությունների, դիրքորոշումների, կողմ-դեմ կարծիքների վերաբերյալ, սակայն բովանդակային առումով իրականում դժվար է ասել, որ ընթերցողը այս լրատվամիջոցների օգնությամբ ընդգրկուն ինֆորմացիա է ձեռք բերում, որ հիմք կարող է դառնալ սեփական հետևությունների համար: Մյուս խմբում այն ՉԼՄ-ներն են, որոնց մոտ թեև հնարավոր է այս

կամ այն ակտորների կամ թեմայի ընտրողական ներկայացում, սակայն վերջիններին տրամադրած տեղեկատվությունն ավելի հստակ է: Հստակ այն իմաստով, որ Սահմանադրության նախագիծը քննարկվում է կոնկրետ շեշտադրումներով, կա հանրային կարիքի և առաջարկվող նախագծի հնարավոր հետևանքների մասին դիսկուրս, լուսաբանվում են նաև ոստիկանների և «Ռ»-ի ակտիվիստների միջև բախումները: Lragir.am-ի դեպքում առաջին հայացքից թվում է, թե խոսող ակտորները հիմնականում «Ռ»-ի ճակատից են: Մինևույն ժամանակ լրատվամիջոցը իր հարցադրումներով վեր է հանում միայն վերջիններին ավելի բացասական լույսի ներքո ներկայացնող կողմերը. ճակատը ներկայացնող տարբեր ուժերի միջև առկա խնդիրներ, անհամաձայնություններ, կազմակերպական հարցեր և այլն: Եվ այս համատեքստում միասնականության, անհամաձայնությունների բացառման լատենտ պահանջը ներկայացվում է որպես ակնհայտ անհրաժեշտություն այն դեպքում, երբ ճիշտ հակառակը՝ կարող էր շեշտադրվել «Ռ»-ի բազմազանությունը, ցանցայինությունը և կենդանի պրոցես լինելը:

ՀԱՄԱՏԵՑՍ

Սահմանադրական փոփոխությունների նախագիծը բոլոր լրատվամիջոցներում ներկայացվել է Սերժ Սարգսյանի- իշխանությունների վերարտադրման տեսանկյունից: Դի- տարկված լրատվամիջոցների կողմից կարևորվում է Սահմանադրական փոփոխությունների քաղաքական (կառա- վարման համակարգի) հարցը՝ գրեթե չանդրադառնալով սոցիալական, տնտեսական, մշակութային, բնապահպանական և այլ խնդիրներին և իրավունքներին, որոնք առաջարկվող նախագիծում մեծապես վտանգված են և խնդրահարույց:

Աղյուսակ 4

Անորոշ համատեքստ	Առավել որոշակի համատեքստ
<i>1in.am</i>	<i>A1plus.am</i>
<i>News.am</i>	<i>Aravot.am</i>
<i>Tert.am</i>	<i>Armtimes.com</i>
	<i>Azatutyun.am</i>
	<i>Epress.am</i>
	<i>Iravunk.com</i>
	<i>Lragir.am</i>

«Հայկական ժամանակ»-ը և «Առավոտ»-ը կողմերի գործողությունները, հայտարարություններն ու մեկնաբանությունները ներկայացրել են գրեթե հավասարապես, սակայն առաջինի դեպքում լատենտ կերպով նկատվում է «Ոչ»-ի ճակատի հնարավոր կապի ցուցադրում ռուսական ուժերի հետ, ինչն ի դեպ, արվում է այլ լրատվականներին հղումների միջոցով:

Թեմայի բազմակողմանի լուսաբանման առումով կարևոր տեղ են գրավում «Առավոտ», Epress.am, A1plus.am լրատվականները, որոնք կառավարման համակարգի և իշխանությունների վերարտադրման դիսկուրսի ներկայացմանը զուգահեռ, ներկայացրել են այլ խնդիրներ, օրինակ՝ Նախագծում Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների, Սահմանադրական դատարան դիմելու իրավունքի, առողջ և բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի Նախագծից դուրս մղման մասին, ինչպես նաև այն մասին, որ ներկայացված Սահմանադրության Նախագծում պաշտոնատար անձանց կողմից բնապահպանական տեղեկությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար պատասխանատվությունը դուրս է թողնված:

Ընդհանուր առմամբ, կարող ենք եզրակացնել, որ առցանց մեդիայի աշխատանքը չի ապահովում լսարանի լիարժեք իրազեկվածություն Սահմանադրական փոփոխությունների առաջարկված Նախագծի մասին և առկա են բազմաթիվ մանիպուլյատիվ մեխանիզմներ, որոնց ազդեցությունը խնդիրներ է առաջացնում իրականության բազմակողմ և լիարժեք ներկայացման տեսանկյունից:



---

# **Index for Media Tolerance**

## **towards Human Rights Defenders and Change Activists in Armenia**

---

*April through December, 2015*

Yerevan 2016



*This research was carried out by the Socioscope NGO with the financial support of Norwegian Helsinki Committee. It sought to examine and to index (in)tolerant media discourse targeting human rights defenders and change activists. The media monitoring is based on coding of media texts by the scale of (in)tolerance, and includes both objective and factual measures and subjective measures relying on the coder's perception. The present report summarizes the research findings for the period of April through December, 2015.*

*The research was made possible through cooperation with several partner organizations and individual experts working in the media and in the area of human rights protection. We express our sincere gratitude to them.*

# Content

<b>Chapter 1</b>	<i>The media system in Armenia: a snapshot</i>	75
<b>Chapter 2</b>	<i>Libel and offence in the media: Towards legal definitions and cases</i>	80
<b>Chapter 3</b>	<i>How to measure (in)tolerance? Brief description of the index</i>	84
<b>Chapter 4</b>	<i>Index for media tolerance towards HRDs and ChAs: main findings</i>	91
<b>Chapter 5</b>	<i>The media stance on human rights defenders and change activists: Qualitative observation</i>	94
<b>Chapter 6</b>	<i>Experts' perspectives on the media's position toward human rights defenders and activists</i>	114
<b>Chapter 7</b>	<i>Conclusion and recommendations</i>	117
<b>Annex</b>	<i>Representation of the constitutional reforms in online media</i>	119



## Chapter 1

---

### The media system in Armenia: a snapshot

---

The role of the media in contemporary world can hardly be overestimated. It has penetrated into virtually all domains of both public and private life indeed profoundly yet unnoticeably. French thinker Jan Baudrillard offered to think of this transformation of the media by analogy with genetic mutation that makes pointless the discussion on causes and effects.

*“We must imagine TV on the DNA model, as an effect in which the opposing poles of determination vanish according to a nuclear contraction or retraction of the old polar schema which has always maintained a minimal distance between a cause and an effect, between the subject and an object: precisely, the meaning gap, the discrepancy, the difference (...) It is this gap which vanishes in the genetic coding process”<sup>1</sup>.*

Another well-known French theorist, Pierre Bordeaux argued that media (precisely television) has turned into an instrument of symbolic oppression<sup>2</sup>.

It is thus not to wonder why occupying a position in the media space is becoming a public and political resource promising broad opportunities for more resources and extended power. The promotion from the fourth-estate position to a higher pedestal of authority, however, is accompanied by increasing criticism - media criticism - which seeks to uncover the manipulative media influences on the public domain and to find ways to disengage from them.

How can the Armenian media system be described under this lens? In structural terms, the media can be seen as consisting of traditional media (with television, radio and print press), and alternative media embracing online media and social networks.

---

<sup>1</sup> See [http://lit.lib.ru/k/kachalow\\_a/simulacres\\_et\\_simulation.shtml](http://lit.lib.ru/k/kachalow_a/simulacres_et_simulation.shtml).

<sup>2</sup> See <http://bourdieu.name/en/node/108>.

According to Yerevan Press Club<sup>3</sup>, traditional media in Armenia comprises around 60 national and regional TV companies, 19 radio companies and 72 print media outlets. Add to this the foreign TV channels aired locally. The alternative media is far more dynamic. With further expansion and increasingly more intensive use of internet, it shows exponential growing rate comparable to that of mushrooms after rain. The boundaries between the traditional and alternative media are no longer clear, which adds to the ambiguity of the situation. Many print media outlets have launched their online versions, which typically excel their printed originals by enhanced functionality to include also news feed, video streaming etc. Similarly, TV companies try to ensure their live streaming in the web to achieve more flexibility and reach the audience that is not reachable otherwise, that is, through traditional broadcasting infrastructures.

Arguably, despite the expanded activity of most traditional media through their online versions, they continue to be perceived as representatives of the traditional media space on the part of the audience. Thus, despite the blurring of operational differences between these two domains, this difference persists in the public representation, which makes it relevant to examine them separately. The perceived differences between these two media sections become apparent also from various studies in the field, such as the 2013 report on “Mapping Armenia’s digital media” by the Open Society Foundations – Armenia<sup>4</sup>, and the 2011 and 2013 Armenia Media Public Opinion and Preference surveys by CRRCArmenia<sup>5</sup>. Together, they allow describing the public perceptions of the media in Armenia in the following aspects:

- *Television continues to be the main source of information for most people in the country.*
- *The public perception of television is much more clear-cut: people watch, and they either trust or don’t trust.*
- *The perception of online media is far more unsteady. One visible evidence from the study results is the great number of respondents who had difficulty in answering question items asking for attitudes.*
- *Online media users are predominately in the age group of under 40; the number of those aged above 40 shows considerable decline in the audience.*

As for the more general context for the online media’s operation, there are not yet clearly shaped public attitudes, as noted above,

<sup>3</sup> See <http://ypc.am/armenian-media/?lang=hy>.

<sup>4</sup> See <http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/OSF-Media-Report-Armenia.pdf>.

<sup>5</sup> See <http://www.crrc.am/research-and-surveys/completed-projects/326-Alternative-Resources-in-Media?lang=en>.

as to whether the media are impartial and trustworthy or controlled and directed. On the one hand, this can be a *carte blanche* for the media to gain the resource of public trust, while it can also be used to dress biased report into outward objectivity and to use manipulations under shaky public opinion.

It is therefore pertinent to consider expert opinions for better understanding of the general socio-political context in which the media operates. Expert opinions were collected and combined from two sources –relevant studies and reports in the field; and expert interviews conducted by our research team. Expert interviews are discussed in the last section of the report by combining their construal of the context with expert interpretations of the measured data.

Among field-relevant studies and reports included in the analysis, annual reports on Freedom House's Freedom of the Press and Freedom on the Net were reviewed. The overall index of freedom of the press is drawn on the basis of assessing three components–legal, political and economic<sup>6</sup>. According to these studies, Armenian press has been assessed as not free from 2003 onwards<sup>7</sup>. The level of press freedom by economic indicator has been at its worst during 2002-2004, and has been maintaining more or less the same rank over the last several years. There is a clear decline in the political component of the index, and a less visible but still negative shift also in the legal component over the last 5 years.

At the same time, interestingly, Armenia has been ranked as free according to the freedom on the net, showing no significant issues in terms of restrictions on internet content or users' rights<sup>8</sup>. The 2015 report does not indicate any cases of blocking social networks or content related to social and political issues, and no arrests of bloggers or users for digital expression.

This dual situation of non-free press and free internet points to another distinctive feature of the context in which the online media space operates.

According to the 2015 Freedom of the Press report, continuous harassments and prosecutions of journalists and the climate of impunity have made self-censorship a common practice among journalists in the country, especially so with regard to criticism of the authorities and governmental circles<sup>9</sup>. Self-censorship is particularly salient in television. The online media outlets, meanwhile,

<sup>6</sup> See [https://freedomhouse.org/report/freedom-press/freedom-press-2015#.Vu\\_y2dJ97cs](https://freedomhouse.org/report/freedom-press/freedom-press-2015#.Vu_y2dJ97cs).

<sup>7</sup> See <https://freedomhouse.org/report/freedom-press/2003/armenia>.

<sup>8</sup> See <https://freedomhouse.org/report/freedom-net/2015/armenia>.

<sup>9</sup> See <https://freedomhouse.org/report/freedom-press/2015/armenia>.

serve as alternative platforms with a lot more freedom and less dependence upon politically connected owners with distinct attitudes and interests. Thus there is no distinct editorial line regarding coverage of theme-relevant issues online.

With regard to the economic environment, the reports highlight that most of the broadcast media are owned by either government officials or government-friendly individuals. With the rise of popularity and intensity of online news platforms, Armenia's print media undergoes a decline. Print press outlets show more willingness to follow the political lines of their owners, whereas there is a lot less clarity and regulation in questions of ownership and financing sources of online media outlets.

As for the legal environment, the next section of the report provides a more detailed account of the issue examining the regulatory framework and the specific legal norms. At the same time, the picture of the Armenian media would not be complete without discussing the oversight mechanisms, that is, the unwritten rules that operate within the professional community and serve as guidelines of professional conduct. Attempts have been made since 2000 to put the self-regulation mechanisms on institutional grounds. In 2007, Yerevan Press Club set for the initiative to elaborate the key norms for professional ethics.

An oversight body of mass media ethics was subsequently established with initial composition of 7 members, which expanded to 14 members in 2011<sup>10</sup>. In 2015, changes were made in the set of professional ethical norms at the initiative of this body. The document setting these norms is the code of ethics of Armenian media and journalists<sup>11</sup>, which, according to the official data published on the Yerevan Press Club website, has so far been signed by 41 media outlets and is supported by 8 journalists' unions. The fifth section of the document defines respect for representatives of various groups, as well as universal values as professional ethical norms. Adhering to this principle implies, according to the document, that the editorial staff and the journalists commit themselves to:

"5.1. Avoid prejudice against people on the ground of their race, sex, age, religion, nationality, geographic origin, sexual orientation, physical handicap, external look or social status,

5.2. not promote in any way ethnic or religious hatred and intolerance, or any discrimination on political, social, sexual, and lan-

<sup>10</sup> See <http://ypc.am/self-regulation/?lang=hy>

<sup>11</sup> *Code of Ethics of Armenian Media and Journalists. Adopted in revised edition on May 16, 2015 at the meeting of media representatives-members of the self-regulation initiative.*

guage grounds; exclude hate speech”<sup>12</sup>.

It should be noted that 19 out of 41 media organizations joining the code are regional media, and from broadcast media, only Erkir Media TV and Armenian 2nd TV channels have joined the document. TV companies of republican significance (with nationwide coverage), as well as several top-rated online media outlets such as News.am, 1in.am and Azatutyun.am are not in this 41. Further to this, issues involving those media outlets that didn't join the code can be reviewed by the Observing body only upon the consent of these outlets. The voluntary basis of being part and subject to the code makes the latter a limited instrument of self-regulation.

---

<sup>12</sup> See [http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics\\_arm.pdf](http://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf).



## Chapter 2

---

### Libel and offence in the media: Towards legal definitions and cases

---

One necessary step in understanding media intolerance towards human rights advocates and activists is to clarify the definitions and interpretations of key concepts such as libel or defamation, offence and intolerant speech as defined in the civil code of Armenia. This will allow addressing and identifying those cases when media content does qualify as defamation or intolerance. The main purpose of this preliminary work before the main analysis is thus to clarify whether the law defines such cases with sufficient clarity, and whether the problems in definition have the potential to lead to manipulations both by the media and the law enforcement agencies interpreting the law.

Armenia eliminated criminal liability for libel to make it a civil offence in May 2010. The right for and the order of compensation for harms to honor, dignity and reputation are now ruled by the civil code, which defines the terms of defamation and offence and provides the conditions and size of compensation to the damage inflicted. A remaining question is how the provisions work in reality; how, for instance, they are reflected in court cases involving media.

Thus, libel, by the present law, is the public statement of such facts about a person which are untrue and which inflict damage to a person's honor, dignity or business reputation.

The law also provides for cases when public statement of facts cannot be considered a libel. One such reservation is for the cases when the public statement, in the given situation and in its substance, proceeds from **priority public interest**. Such interpretation of the distinction between offence and non-offence is quite problematic, since it rests on a highly subjective and individual perception of the notion of priority public interest. What itself constitutes public priority remains uninterpreted and thus arbitrary.

If the libel was published in the content communicated by a news organization, the person affected can claim a public disclaimer of the defamatory facts by the same medium, and/or publish her/his response regarding them.

If the offence or the defamation contains no reference to the news source (author) or the latter is unknown or if the news entity enjoys the right not to disclose their source of information, then the one making the public defamatory statement (such as the person quoted in the news) is subject to monetary liability. If the public statement was made by the very news communicator/entity, the latter is held liable for compensation.

A person has the right to judicially claim compensation for the property damage caused to her/him as a result of the offence or libel.

To be qualified as libel, a report has to meet four effectiveness conditions set by the Armenian Court of Cassation in its established precedents.

1. *The presented data about a person are factual, that is, the presented data should include concrete, clear information about some action or inaction; they are not abstract.*
2. *These factual data about a person are presented publicly.*
3. *The presented factual data falsify reality, that is, they are untrue, ungrounded and unreliable.*
4. *The presented factual data substantively damage a person's honor, dignity or business reputation.*

In court practice, however, problems arise when it comes to investigation and court decisions: the legislation doesn't provide for criteria to recognize the given information as damaging.

Courts consider the defamatory nature of the information based on public perceptions, representations and moral codes. This aspect can also be discussed in its relation to the vaguely-worded and under-defined notion of priority public interest, whereby judges are likely to be guided by own understanding of morality or commonplace stereotypes. On the one hand, the aforementioned effectiveness conditions have been intended for clearer definition of libel and offence. On the other hand, however, they are not specific enough to measure and objectively assess each individual case (as it will be shown in our overview of a manifest libel lawsuit against a media organization). In an attempt to term defamation through precise manifestations, the first condition, for instance, requires presence of concrete information about an action or inaction, while disregards abstract judgments as damaging. It follows that a number of sensitive topics for Armenian society (such as ho-

mosexuality or protecting homosexual persons' rights) may be discussed and easily criticized (mainly through clichéd and stereotypical expressions) in the media without a specific target or a named addressee. The problem is, people and organizations engaged in the protection of LGBT rights are not many, and can easily be identified. As a result, we are in a situation where defamation is present in effect even though no personal labeling or defamation seems to take place, yet the law is not sensitive enough to embrace these cases too. Thus, in a 'small country' like Armenia using seemingly abstract judgments can be seen as a means of targeting specific persons and organizations.

From 2010 on, many media outlets or representatives have been charged under defamation civic suits. Over the 2010-2014 period, the Committee to Protect Freedom of Expression monitored court proceedings under offence and libel involving media. Their data indicate as many as 98 defamation civil suits since the decriminalization of libel in 2010 throughout 2013. Out of these, 17 petitions were submitted in 2010, 37 in 2011, 18 in 2012, and 26 in 2013. There are no published statistical data for 2014-2015, yet three lawsuits during this period are remarkable as precedents. These are the three lawsuits<sup>1</sup> filed against Iravunk Media and its editor Hovhannes Galajyan for the damage inflicted to honor and dignity by their publication on May 17, 2014 titled 'They serve the interests of international homosexual lobbying: the blacklist of nation's enemies'.

The author of the article was making links to the Facebook pages of several people and urging the reader not to interact with them or employ them, as well as to fire them for any convenient excuse. On May 31, 2014 these persons sent a note to the editorial of Iravunk newspaper, informing that the article was offensive and requesting to publish a retraction of it. In response, however, the daily published another article with similar content some days later- on June 3- continuing offenses addressed to the persons demanding the retraction, such as 'the mentioned type', 'stained biography' etc. These two articles had a wide public reach and were disseminated in different social media. The publications contained a call for hatred and discrimination, and several offensive expressions damaging the plaintiffs' honor and dignity, such as 'these types', 'zombies who believe in the theses of gay-propaganda', 'internal enemies of the nation and the state'.

---

<sup>1</sup> In the first suit, a group of citizens were the concerned party, in the second suit- some members of "New Generation" NGO, and in the last one - "New Generation" NGO itself.

